Azg Ազգ

7 ՅՈՒՆԻՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 102(4954)

ISSN: 1829-1651

Հիլարի Քլինթոնը «նոր մոտեցում է խոստանում

Հունիսի 4-ին Երեւանում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, արդեն իսկ տեղյակ Տավուշի մարզի Չինարի գյուղի մերձակայքում հայ զինվորների սպանության փաստին, նախընտրեց բավարարվել միայն «խիստ մտահոգ» լինելու մասին հայտարարելով:

Պարզվում է, Միացյալ Նահանգների բարձրաստիճան ներկայացուցչին մեկ կողմի զոհերի առկայությունը բավարար չէր դատապարտման խոսքեր ասելու համար, քանի որ արդեն Բաքվում, ըստ «Ազերիպրես» գործակալության, տիկինը Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ համատեղ ճեպազրույցում «դատապարտել է» միջադեպերը՝ նշելով. «Այդ բռնություններին վերջ պիտի տրվի»:

Անդրադառնալով հունիսի 17-ին կամ 18-ին Փարիզում կայանալիք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եւ Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպմանը՝ Հիլարի Քլինթոնը հայտարարել է, թե Փարիզում «մենք զարաբաղյան հակամարտության լուծման նոր մոտեցում կառաջարկենք»: «Մենք ցանկանում ենք հնարավորինս շուտ հասնել խաղաղության: Հարցի լուծումը պետք է գտնվի», Բաքվում հայտարարել է Քլինթոնը:

Ի՞նչ մոտեցում, ինչո՞ւ նոր մոտեցում եւ արդյոք հենց այդ մոտեցո՞ւմն է Բաքվի սադրանքների նպատակակետը՝ գուցե պարզ դառնա, երբ փարիզյան հանդիպումն, այդուհանդերձ, կայանա:

«Ես ասել եմ Ադրբեջանի նախագահին, որ ԱՄՆ-ը պատրաստ է անել ամեն ինչ՝ աջակցելու հակամարտության կարգավորմանը», Բաքվում հայտարարել է Հիլարի Քլինթոնը՝ եզրափակելով հարավկովկասյան այցն ու մեկնելով Թուրքիա:

Ա. Հ.

Փաստացի պատերազմ կամ ադրբեջանական շանտաժ Հիլարի Քլինթոնին

Իրանի հարցերով տարածաշրջան եկած ԱՄՆ պետքարտուղարը զանգել է Վաշինգտոն՝ «մտահոգ արվող լարվածությամբ»

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Այն, ինչ այս օրերին տեղի է ունենում հայ-ադրբեջանական սահմաններին ու շփման գծի երկայնքով, այլ կերպ, քան ողբերգություն, չես կոչի: Դրանից զատ՝ այսօրինակ իրավիճակը նաեւ ամենաուղղակի ապտակ է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր ԱՄՆ-ի՝ տարածաշրջանային այցով երեկ արդեն Բաքվում գտնվող պետքարտուղար Հիլարի Քլինթոնին, քանի որ իրավիճակը հենց պատերազմային է, իսկ տիկին Քլինթոնը համառորեն Երեւանում ու Բաքվում կրկնում է, թե հակամարտությունը չունի ռազմական լուծում:

Ադրբեջանական դիվերսիաները ապացուցում են, որ Քլինթոնի խոսքը գրոշի արժեք չունի, ավելին, ամենայն հավանականությամբ ամերիկյան շահերն այլ երեւույթների շուրջն են պտտվում, ինչն էլ սանձարձակ է դարձրել Բաքվի իշխանություններին:

Դիվերսիաների ու երկու կողմում զոհերի մասին հաղորդագրությունները երեկ դեռեւս շարունակություն ունեին: Մասնավորապես, ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հաղորդագրության, հունիսի 5-ի լույս 6-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական շփման գծի հարավային հատվածում՝ Հորադիզի ուղղությամբ ադրբեջանական դիվերսիոն խումբը հերթական փորձն է ձեռնարկել ներթափանցելու ԼՂՀ ՊԲ-ի մարտական դիրքերից: Ղարաբաղյան ուժերի առաջապահ ստորաբաժանումները (ի տարբերություն Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի մոտակայքի դիրքերի զինվորների - Ա.Հ.) «ժամանակին հավաստանչելով դարանակալ հակառակորդի նախահարձակ գործողությունը, դիմել են պաշտպանական մարտի եւ վերջինիս հետ շրջել իր ելման դիրքեր»:

Մերոնց զգոնությունը դրսեւորվեց նաեւ երեկ հետմիջօրեին, Ճամբարակի (նախկին Կրասնոսելսկ) ուղղությամբ, երբ ՀՀ ԶՈՒ առաջապահ դիրքերից մեկում կանխվել է «ադրբեջանական հերթական արկածախնդրությունը եւ հակառակորդը նահանջել է կրելով զգալի կորուստներ», ինչպես հաղորդում է պաշտպանության բանակի հաղորդագրությունը:

Տես էջ 3

Հիմա էլ ԵԱՀԿ գործող նախագահն է գալիս տարածաշրջան... միայն թե առանց միջադեպերի անցնի

Հունիսի 11-14-ը Երեւան, ապա Թբիլիսի, հետո նաեւ Բաքու է այցելելու ԵԱՀԿ գործող նախագահ Իռլանդիայի արտգործնախարար, փոխվարչապետ Է. Գիլմորը: Ինչպես տեղեկանում ենք ԵԱՀԿ պաշտոնական կայքէջից, Գիլմորը Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում հանդիպումներ կունենա կառավարության անդամների, կուսակցությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու ԵԱՀԿ աշխատանքը տարածաշրջանում:

«ԵԱՀԿ գործող նախագահի համար կարեւոր առաջնահերթություն է ԵԱՀԿ տարածքում ձգձգված հակամարտությունների տեւական կարգավորմանն ուղղված առաջընթացի ապահովումը», նշված է հաղորդագրությունում: Ըստ այդմ, Գիլմորը տարածաշրջանային այցելության ընթացքում կքննարկի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի, 2008-ի ռուս-վրացական պատերազմի հետեւանքներն ու համագործակցությունը ԵԱՀԿ-ի հետ:

Իռլանդիայի փոխվարչապետը ասուլիսներ կունենա բոլոր երեք հարավկովկասյան մայրաքաղաքներում:

Ա. Հ.

Կրակել են Կարմիր խաչի ներկայացուցիչների ուղղությամբ

Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր սահմանամերձ գյուղի բնակիչ **Ռուբեն Աբրահամյանն** ասում է՝ Շամշադինի տարածաշրջանում ադրբեջանցիների դիվերսիոն հարձակումները հաճախակի են դարձել: Սահմանամերձ գյուղերում ապրուստի հիմնական միջոցը հող մշակելն է, ինչն էլ գյուղացիները ստիպված են անել ադրբեջանցիների՝ հաճախակի արձակվող կրակահերթերի տակ:

Երեկ Ռուբեն Աբրահամյանը «Արմաս» ակումբում նաեւ տեղեկացրեց, որ ամսի 5-ին՝ ժամը 17.30-ի սահմաններում ադրբեջանական կողմից կրկին կրակել են Տավուշի մարզի Այգեպար գյուղի ուղղությամբ, այս անգամ Կարմիր խաչի ներկայացուցիչների վրա:

Ի. Պ.

Ֆրանսիայի մտահոգությունը՝ «8 զինծառայողների սպանության առնչությամբ»

Ֆրանսիայի ԱԳ գերատեսչությունը հաղորդագրություն է տարածել, որում իր մտահոգությունն է հայտնել վերջին օրերին շփման գծում ընդհանուր առմամբ 8 զինծառայողների սպանության առնչությամբ: «Panorama.am»-ը, հղում անելով Ֆրանսիայի ԱԳ նախարարության պաշտոնական էջին, տեղեկացնում է, որ նշված հայտարարությամբ կոչ է արվում կողմերին զերծ մնալ ուժի կիրառումից եւ հարգել 1994-ին սահմանված հրադադարի ռեժիմը:

«Լեռնային Ղարաբաղի խնդիրը ռազմական լուծում չունի: Կողմերը պետք է հավատարիմ մնան հակամարտության խաղաղ կարգավորման, ՄԱԿ-ի կանոնադրությամբ եւ Հելսինկյան եզրափակիչ ակտով ամրագրված ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության եւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքներին»:

Հայտարարության համաձայն, ֆրանսիական կողմը պատրաստվում է հունիսին ԵԱՀԿ համանախագահների մասնակցությամբ Փարիզում նախատեսված Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների կայանալիք հանդիպմանը:

Ա. Հ.

«Դրամի արժեզրկումը սարսափելի չէ»

Փոխարժեքի տատանման մասին խոսեցին ԿԲ նախկին նախագահն ու «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավարը

Դրամ-դոլար փոխարժեքի վերջին տատանումներին երեկ անդրադարձան Հայաստանի Կենտրոնական բանկի նախկին նախագահ **Բագրատ Ասատրյանը** եւ «Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար **Թաթուլ Մանասերյանը**:

Բագրատ Ասատրյանի կարծիքով, դրամի արժեզրկման վրա ազդել են քաղաքական գործընթացները, մասնավորապես մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները: Նախընտրական ժամանակաշրջանում աճել է կանխիկ դրամի շրջանառությունը՝ ապակայունացնելով ֆինանսական իրավիճակը: Ըստ ԿԲ նախագահի, մի «դատարկ մարմնի» ձեւավորման պատճառով, որտեղ բացակայում է քաղաքական միտքը, վճարում է հասարակությունը: Այդուհանդերձ, Բագրատ Ասատրյանը սարսափելի չհամարեց դրամի արժեզրկումը, քանի որ չի հասել 10 տոկոսի մակարդակին, ինչը տնտեսության համար մեծ վտանգ չի ներկայացնում:

«Այլընտրանք» հետազոտական կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերյանը դրամի արժեզրկման հիմնական պատճառը համարեց միջազգային շուկաներում տեղի ունեցող գործընթացները՝ եվրոդոլար հակամարտությունը: Հետխորհրդային երկրների արժույթները եւս հիմնականում արժեզրկվում են: Թաթուլ Մանասերյանը ենթադրում է, որ Հայաստանը բավականին մեծ վնասներ կկրի այս գործընթացից, քանի որ ներմուծող երկիր է: Դա կերեւա, երբ սկսվեն ներմուծվել ապրանքների նոր խմբաքանակները: Միաժամանակ, ըստ Թաթուլ Մանասերյանի, դրամի արժեզրկումը բավարար պայման չէ արտահանումը խթանելու համար: Նա նաեւ չբացառեց փոխարժեքի վրա ընտրությունների ազդեցություն ունենալը:

Տիգրան Սարգսյանի՝ վարչապետի պաշտոնում նշանակվելու մասին լրագրողների հարցին պատասխանելով, Բագրատ Ասատրյանն ասաց, որ դա ոչ մի կերպ չի փոխի կյանքի որակը, տնտեսական եւ քաղաքական համակարգը: ԿԲ նախկին նախագահի խոսքերով, Հայաստանի տնտեսական դժբախտությունների պատճառն այն քաղաքական համակարգն է, որը ձեւավորվել է վերջին 4 տարիներին: «Այդ համակարգի պատճառով անցյալ տարի 50 հազար մարդ հեռացավ երկրից, 50 հազար էլ այս տարի կհեռանա», նման հայտարարություն արեց Բագրատ Ասատրյանը: Կցանկանայինք նշել, որ հակառակ Բագրատ Ասատրյանի հայտարարության, Հայաստանի մշտական բնակչությունը անցյալ տարի նվազել է մոտ 12 հազարով: Հիշեցնենք նաեւ, որ նրա ներկայացրած քաղաքական ուժի իշխանության տարիներին՝ 90-ականներին, Հայաստանից հեռացել էր 700 հազարից մինչեւ 1 մլն մարդ (ՄԱԿ-ի հաշվարկներով):

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

«Ազգի» ԱԺ-ական հավատի եւ իրազեկ աղբյուրները

Ազգային ժողովում շարունակվում է նոր պատգամավորների տեղավորման եռուզեռը: Տեղավորումը, պարզվում է, այնքան էլ հեշտ գործ չէ, քանի որ պատգամավորները տարբեր ցանկություններ են հայտնում, մի մասն ուզում է խմբակցության սենյակին մոտ լինել, մյուսներն, ընդհակառակը, հեռու են ուզում մնալ այդ սենյակից՝ աչքից-շառից-փորձանքից հեռու, բայց եւ ամենահեռավոր անկյունների սենյակներում լինելը վիրավորական են համարում: Բացի դրանից՝ ԱԺ միջանցքների, դահլիճների ու հանձնաժողովների նիստերի սրահների հարմարավետությանը (մենք կասեինք՝ ճոխությանը), որի հեղինակը Հովիկ Աբրահամյանն է, պետք է հարիր լինի պատգամավորների սենյակների հարդարանքը, հատկապես նոր եկածներից շատերն այդպես են համարում՝ փորձելով «տկլոր» չթողնել իրեն սենյակները:

Երեկ զարմանալիորեն բավական անցուդարձ կար ԱԺ շենքի ներսում՝ հսկայ երեւում էր, որ Ազգային ժողովի նախագահն է հատկապես բուռն գործունեություն ծավալում նաեւ, եւ դատելով նրա սենյակ ուղեւորվողներից՝ դա բոլորովին էլ միայն տեխնիկական գործունեություն չէր: Օրինակ՝ մի տասը րոպե մեր ներկայության պահին նրա մոտ տեւական գտնվելուց հետո դուրս եկավ Արարատի մարզից Էդիկ Բարսեղյանը, որից չկարողացանք պարզել այցի նպատակն ու բովանդակությունը: Իսկ ահա ԲՀԿ-ական Վարդան Օսկանյանը, որին լրագրողները փորձում էին կանգնեցնել, ասաց, որ ուշանում է ԱԺ նախագահի հետ հանդիպումից, սակայն Հ. Աբրահամյանի հետ նրա հանդիպումը մի քանի րոպե տեւեց միայն, ու էլի չկարողացանք պարզել այս մենակ կանչվածության հանգամանքը:

ԲՀԿ խմբակցության սենյակի վրա մի կողմից գրված էր խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանի անունը, մյուս կողմից՝ արդեն խմբակցության քարտուղար Նաիրա Զոհրաբյանի անունը: Խմբակցության սենյակ գնալու նպատակն էր իմանալ, թե ինչո՞ւ է իր պաշտոնից հրաժարվել ԲՀԿ առաջնորդի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանը, որը երեկ հայտարարություն էր տարածել, որ հունիսի 6-ից դադարեցնում է ԲՀԿ նախագահի մամուլի խոսնակի իր լիազորությունները: Նա նաեւ նշել էր, թե շնորհակալ է բոլոր այն ՁԼՄ-ներին, որոնց հետ ունեցել է ակտիվ կառուցողական ու արդյունավետ համագործակցություն: Սակայն խմբակցությունում որեւէ պատգամավոր ներկա չէր, ու խոսնակի հրաժարականի պատճառների վերաբերյալ պաշտոնական բացատրություն այդպես էլ չստացանք: Հետաքրքրությունն այդ խնդրի հանդեպ առկա է այն պատճառով, որ մամուլով եւ բերանացի տարբեր ենթադրություններ կան, թե պատճառն այն է, որ նա ինքնագլուխ շփումներ է ունեցել նախագահական նստավայրի հետ, մի ուրիշ ենթադրությամբ էլ՝ Խ. Գալստյանը նեղացած է իրեն մանդատ չտալուց: Ամեն դեպքում՝ հաճելի էր կիրթ մարդու հետ շփվելը, որ էր եւ է Խ. Գալստյանը: ԲՀԿ խմբակցության պատգամավոր Բազմաստ Առաքելյանի սենյակում հանդիպեցինք մամուլի ակտիվներից մեկի ղեկավար Վանիկ Էլիզբարյանին, որն, ըստ մամուլի, Ծառուկյանի խոսնակի պաշտոնի հավակնորդ է համարվում: Էլիզբարյանը նշեց, որ իրեն այդպիսի առաջարկ չի արվել, իր հետ նման քննարկում տեղի չի ունեցել, եւ ընդհանրապես՝ այդ մասին նա իմացել է միայն մամուլից:

Որոշ լրատվություն քաղեցինք ՀՀԿ-ին մոտ կանգնած ԱԺ մեր աղբյուրներից: Ըստ այդ տեղեկությունների՝ հունիսի 11-13-ը վերջնականապես կորոշվի ՀՀԿ-ական նախարարների հարցը, ու փաստորեն այդ ժամկետի մեջ որ օրը ՀՀԿ գործադիրի նիստ եղավ՝ ուրեմն վերջնականապես որոշված կլինի խնդիրը: Ըստ այդ աղբյուրի՝ ՀՀԿ-ի մինչեւ այժմ աշխատած նախարարների 90 տոկոսը կշարունակի պաշտոնավարել, ՕԵԿ-ի երկու նախարարները եւս կմնան, ինչը չի կարելի ասել Մանուկ Վարդանյանի մասին: ԲՀԿ-ի 4 նախարարների փոխարեն նախարարներից մեկի պորտֆելը հաստատ տրվելու է Սամվել Նիկոյանին: Թե ո՞ր նախարարության՝ կախված կլինի նրանից, թե նախարարություններից ո՞ր մեկը կտրվի ՕԵԿ-ին (նախարարն էլ լինելու է Հովհաննես Մարգարյանը): Եթե սոցպաշտ նախարարությունը կարողացան տալ ՕԵԿ-ին, ուրեմն Նիկոյանը կամ կնշանակվի քաղաքաշինության, կամ էլ կպոի եւ տրանսպորտի նախարար: Առողջապահության նախարարի թեկնածուի հարցում էլ ՀՀԿ-ում դեռ չեն կարողանում կողմնորոշվել, սակայն կշեռքն ավելի շատ հակվում է դեպի Դերենիկ Դումանյանը, քան Արա Բաբլոյանը (վերջինս ԱԺ հանձնաժողովի նախագահ է):

Ի դեպ, ՀՀԿ խմբակցության սենյակի վրա Գալուստ Սահակյանի անվանը զուգահեռ պահպանել էին արդեն անցած խորհրդարանում ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանի անունը՝ ՀՀԿ-ում հույս ունեն, որ պաշտոնանշանակումների եւ այդ առիթով մանդատները վայր դնելու արդյունքում Մելիքյանն ի վերջո կրկին կհայտնվի խորհրդարանում:

Իսկ ՀՀԿ-ից Ռաֆիկ Գրիգորյանի՝ Գեղարքունիքի մարզպետ դառնալու հավանականությունը 100 տոկոս չէ, բայց բավական մեծ է, ըստ ՀՀԿ-ական մեր աղբյուրների:

Ինչպես տեսնում եք՝ **«Ազգն»** այսօր խախտեց բամբասանքներին եւ «հավատի» ու «շատ իրազեկ» աղբյուրներին սովորաբար չտրվելու եւ բամբասանքներ չփոխանցելու իր սովորույթը եւ ընթերցողին կերակրեց այս անգամ մյուս թերթերի ոճով: Ինչպես մի անգամ Ազգային ժողովի գրադարանի վարիչ Ֆաթմա Խաչատրյանն էր նկատել՝ եթե մյուս թերթերում որեւէ լուր կասկածելի է թվում, նայում է **«Ազգը»**, քանի որ գիտի, թե այստեղ չափազանցություններ հնարավոր չեն: Այս անգամ չարդարացրինք նաեւ Ֆ. Խաչատրյանի հույսերը՝ ընթերցողի պահանջներին նայեցինք:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇԱՐԺՈՒՄ

Չինարիի դեպքերի առնչությամբ՝ բողոքի երթ

Այսօր, ժամը 11-ին Ազգային օպերայի եւ բալետի շենքից կմեկնարկի բողոքի երթ՝ վերջին օրերին Չինարի գյուղում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ: Ինչպես տեղեկացնում է «Հայազգն» միությունը, երթի մասնակիցները նամակներ կհանձնեն Հայաստանի նախագահին եւ արտաքին գործերի նախարարին:

Նամակում մասնավորապես նշվում է, որ 1994-ի մայիսին հաստատված «կեղծ հրադադարի պայմաններում յուրաքանչյուր տարի հայ երիտասարդները տասնյակներով զոհ են գնում ադրբեջանական գրոհայիններեր հարձակումներին»: «Համարվում է, որ հայկական զորամասերը համարժեք պատասխան են տալիս թշնամուն: Սակայն վերջին տարիներին ադրբեջանական հարձակումների ու դրանցից զոհվող հայորդիների թիվը միայն աճում է», նշվում է նամակում:

Նամակում ներկայացվում են երեք կետից բաղկացած պահանջներ՝ դատապարտելով «այն թողտվությունը, որը ադրբեջանցիներին օրեցօր ավելի լկտի է դարձնում»:

«Ժառանգությունը» Ռ. Հովհաննիսյանի վերաբերյալ որոշումը թողնում է սեպտեմբերին

Որ Հայաստանի քաղաքական դաշտը սպասում է աշնանը, դա ակնհայտ է՝ մի շարք հարցեր հենց աշնանն են պատասխան ստանալու: Դա երեւում էր նաեւ «Ժառանգություն» կուսակցության վարչության անդամ, նախկին ԱԺ պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի՝ երեկվա ասուլիսում հնչած այն կարծիքից, ըստ որի ամռանը որոշակի հարցերի պատասխաններ են որոնվելու, քաղաքական կյանքը կանգ չի առնելու: Այնպես որ Ռաֆֆի Հովհաննիսյանի՝ պատգամավորական մանդատ վերցնել-չվերցնելու որոշումը թողնվում է աշնանը, նախագահական ընտրությունների ոչ պաշտոնական մեկնարկից առաջ: «Ժառանգությունը» նույնպես նախագահի թեկնածու է ունենալու 2013-ի նախագահական ընտրություններին, լավ կլիներ, որ այդ թեկնածուն լիներ ընդդիմադիր դաշտը համախմբող միասնական թեկնածու: Ու, ըստ Ա. Մարտիրոսյանի, ընդդիմադիր դաշտում այդպիսի թեկնածու կարող է լինել Ռաֆֆի Հովհաննիսյանը, քանի որ նրանից ավելի խարիզմատիկ թեկնածու ինքը չի տեսնում: Սակայն դա եւս աշնանը որոշելիք է: Իսկ նոր խորհրդարանում այլ ընդդիմադիրների հետ համագործակցելու հարցը Արմեն Մարտիրոսյանը տեսնում է կոնկրետ խնդիրների շուրջը համագործակցելու կտրվածքով՝ տվյալ խնդիրը «Ժառանգության» մոտեցումներին եթե համընկնի, ուրեմն տվյալ խնդրում կհամագործակցեն:

Մ. Խ.

Ցավակցություն

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը խորապես ցավակցում է Գեորգի Տեր-Ղազարյանցին կնոջ եղբոր՝

Ռաֆայել Շահբազյանի

մահվան կապակցությամբ եւ այս ծանր պահին կիսում հանգուցյալի հարազատների վիշտն ու ցավը:

Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի հայաստանյան մասնաճյուղերի աշխատակիցները ցավակցում են Գեորգի Տեր-Ղազարյանցին կնոջ եղբոր՝ Ռաֆայել Շահբազյանի մահվան կապակցությամբ:

Ավետյաց երկրի ուխտավորները

«Արարատ» հոգեւոր միությունը, որպես Առաքելական եկեղեցու փոքրիկ հատիկ, հաճախակի է հանդես գալիս քարոզչական, սոցիալական, կրթական, մշակութային, տարբեր ձեռնարկումներով: Հենց այս ամենի իրականացման ճանապարհին, միության հոգեւոր հովիվ **Հակոբ քահանա Խաչատրյանի** նախաձեռնությամբ, մայիսի 13-20-ը իրականացվեց ուխտագնացություն դեպի Սուրբ Երկիր՝ Երուսաղեմ:

Ավետյաց երկիր մեկնեցին «Արարատ» հոգեւոր միության գրասենյակի աշխատակազմը, «Արարատ» երգչախումբը, նաեւ անձեր տարբեր ոլորտներից: Հայաստանից մեկնած ուխտավորներին Երուսաղեմում միացան հայ ուխտավորներ Սանկտ Պետերբուրգից, Մինսկից, Ռիգայից, Կալինինգրադից: Աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայորդիներին միավորեցին ուխտը, Հայ առաքելական եկեղեցին ու Հաղորդության խորհուրդը:

Ուխտագնացության ընթացքում բազմաթիսի այցելություններ կատարվեցին աստվածաշնչյան սուրբ վայրեր, ինչպես նաեւ ծանոթացան եւ հաղորդ դարձան դրանց հոգեւոր բովանդակությանը: Հակոբ քահանա Խաչատրյանը պատարագ մատուցեց Սուրբ Աստվածածնի տաճարում եւ այլ սրբավայրերում:

Երուսաղեմի հայ համայնքում «Արարատի» ուխտավորների այցելությունից տպավորված համայնքի բնակիչները նշեցին, որ այս այցելությունը իրենց կյանքին նոր շունչ բերեց՝ առաջին անգամ էր, որ Հայաստանից ժամանած երգչախումբը ելույթ ունեցավ այնտեղ:

«Հավանաբար «Արարատ» միությունը մյուս տարի կկրկնի իր ուխտագնացությունը Երուսաղեմ: Ավետյաց երկիր գնալու հիմնական նպատակը հավատի ճանապարհին ավելի ամրանալն ու զորանալն էր», ասում է միության հոգեւոր հովիվ Հակոբ քահանա Խաչատրյանը վստահեցնելով՝ Երուսաղեմ այցելությունը փոխում է մարդկանց:

Արդեն հայրենիք վերադարձած ուխտավորների խոսքերով՝ Երուսաղեմ այցելությունից հետո հոգեւոր փոփոխությունը առկա է իրենցից յուրաքանչյուրի մոտ: Ուխտավորներից **Հրանտը,** որ Մինսկի քաղաքացի էր, խոստովանեց՝ ինքը Երուսաղեմ գնացել էր որպես տուրիստ, բայց վերադարձել է որպես ուխտավոր՝ լցված հոգեւոր ներդաշնակությամբ:

«Սուրբ քաղաքից վերադարձողը ինքն իրեն պետք է հարց տա՝ ի՞նչ տվեց իրեն Երուսաղեմը: Ուզում եմ, որ Երուսաղեմից վերադառնալուց հետո բոլոր ուխտավորների համար կյանքը շարունակվի հնարավորինս Աստծո բարոյական օրենքների ներքո: Քրիստոնյայի կյանքը հեշտ չէ իհարկե: Մեր ցանկությունն է, որ միության հետ առնչվող անձերը լինեն այն պարարտ հողը, որտեղ սերմն ընկնում է եւ ծիլ տալիս», ասում է «Արարատ» հոգեւոր միության խնամակալների խորհրդի նախագահ **Ծովիկ Դավթյանը**:

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԵՊՄՀ ուսանողուհի

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Քլինթոնը, Քըվրըֆօղլուն եւ Ադրբեջանի հերթական դիվերսիան

Պատահականությո՞ւն է, որ ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնը հարավկովկասյան «տուրնեն» ավարտեց Բաքվում: Պատահականությո՞ւն է, որ նա Թուրքիա ուղեւորվեց Բաքվից: Պատահականությո՞ւն է, որ հուլիսի 6-ին Ադրբեջանի ղեկավարությունը ե՛ւ Քլինթոնին է ընդունել, ե՛ւ Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատար Քըվրըֆօղլուին: Պատահականությո՞ւն է, որ հունիսի 6-ի վաղ առավոտյան ադրբեջանական դիվերսիոն խումբը հերթական սադրիչ գործողությունն է իրականացրել: Այս անգամ՝ ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում:

Այսքան «պատահականություններ» միանգամից չեն լինում: Մանավանդ, նախօրեին էլ ԱՄՆ Վուդրո Վիլսոն հիմնադրամն է «օպերատիվ» ֆնարկում կազմակերպել՝ կապված շփման գծում վերջին օրերի լարվածության հետ: Ընդ որում, «լեյմոտիվն» այն է եղել, որ «պատերազմի վերսկսման հավանականությունը մեծացել է»:

Նման փորձագիտական «ընդհանրացում անել» այն պահին, երբ ԱՄՆ պետքարտուղարը գտնվում է հակամարտության տարածաշրջանում, ոչ մի լուրջ հաստատություն իրեն թույլ չէր տա: Բացառությամբ մի դեպքի՝ երբ ցանկանում է ասել այն, ինչ պետքարտուղար Քլինթոնը չի կարող բարձրաձայնել:

Ըստ երեւույթին, թուրք բարձրաստիճան զինվորականի այցն Ադրբեջան «հերթապահ» չէ: Ադրբեջանի պաշտպանության նախարարի հետ նրա հանդիպմանը ֆնարկվել են մի շարք հարցեր, բայց «հատուկ ուշադրություն է դարձվել տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակին եւ այն խնդիրներին, որ հարուցում է ղարաբաղյան հակամարտությունը»: Այսպես է, հանենայն դեպս, փոխանցել Ադրբեջանի ՊՆ մամլո ծառայությունը:

Ինչպես տեսնում ենք, թուրք եւ ադրբեջանցի ռազմական գործիչները Լեռնային Ղարաբաղի խնդիրը դիտարկել են «տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի համատեքստում»: Նախօրեին էլ Թուրքիայի ԱԳՆ-ն էր ասել, որ «ուշիուշով հետեւում է» զորքերի շփման գծում իրավիճակին: Ընդ որում, երբ զոհեր ունեցել էր հայկական կողմը, Թուրքիայի արտգործնախարարությունը բոլորովին էլ չէր անհանգստացել եւ հայտարություն չէր տարածել, բայց հենց որ ադրբեջանցի զինվորներ զոհվեցին, Անկարան իսկույն հիշեցրեց իր մասին:

Վուդրո Վիլսոն հիմնադրամի փորձագետներից մեկն ասել է, որ եթե «հակամարտությունը վերսկսվի, ապա կներառի նաեւ այլ տարածաշրջաններ»: Սա կարելի է դասել «պատվերով համերգ»-ի շարքին: Մեկնաբաններն զգուշավոր են խոսում Քլինթոնի տարածաշրջանային այցի «ընդհատակյա» նպատակների մասին: Փորձենք վերը նշված «պատահականություններ» ամփոփմամբ «ավանդույթը խախտել»: Ըստ երեւույթին, Իրանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հարցում ոչ ոք չի հանդգնում առաջին «քարը նետել»: Բայց Արեւմուտքը մի ինչ-որ «կրիտիկական պահի» կարող է առանց պայմանականությունների «մտնել» տարածաշրջան:

Այս պահին Ադրբեջանը «համակողմանիորեն շոշափվում է»: Եվ քանի որ այդ երկրի իշխող էլիտան չափազանց հավակնոտ եւ անկիրթ է, Բաքվում տպավորություն ունեն, թե իրենցից ակնկալվում է «բիկֆորդյան ֆուղի» դերակատարություն: Իրանական ուղղությունում Ադրբեջանը նախաձեռնողականություն ցուցաբերել չի կարող: «Քաբային կարգերն» այն չեն: Իսկ ահա Հայաստանի հետ սահմանում եւ ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում Բաքուն արդեն իսկ «լուցկին վառում է»:

Ընդ որում՝ ի տես Միացյալ Նահանգների: Կգնահատի՞ Սպիտակ տունը Իլհամ Ալիեւի «նվիրվածությունը»: Սա չէ պահի կարեւորությունը: Առավել հետաքրքրական է, թե ինչպիսի՞ն է լինելու Թեհրանի արձագանքը: Չէ՞ որ «պատերազմի նախապատրաստություն է տեսնվում» Իրանի հյուսիսային սահմանների վրա: Ընդ որում՝ ԱՄՆ պետքարտուղարի եւ Թուրքիայի ցամաքային զորքերի հրամանատարի «մասնակցությամբ»:

Հորադիզի ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի դիվերսիոն խմբի հունիսի 6-ի գործողությունը Քլինթոնի եւ Քըվրըֆօղլուի՝ նույն օրը Բաքվում գտնվելու արդյունքի է: Հակառակ դեպքում պետք է սպասել, որ Սպիտակ տունը խստորեն կդատապարտի Ադրբեջանի գործողությունները: Եթե ոչ, ուրեմն Քլինթոնը տարածաշրջան էր ժամանել ոչ թե «զսպելու անհանգիստ կովկասյան տարածաշրջանը», այլ բարձր մակարդակով «արձանագրելու, որ խաղաղություն հաստատելու դիվանագիտական ջանքերն սպառված են»: Վուդրո Վիլսոն հիմնադրամի ֆնարկումներն ամփոփվել են այսպես. «Մոտենում է ուժային արբիտրաժի ժամանակը»:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԻԼԱՐԻՆ՝ ԲԱՔՎՈՒՄ

ԱՄՆ պետքարտուղարը «խոստովանեց»...

«Նախագահ Ասադը ունակ չէ իր երկրում խաղաղություն հաստատելու եւ արդիականացնելու այնտեղ կայունությունը: Վաշինգտոնում Սիրիայի բարեկամների հետ բանակցություններ են վարվել, թե այդ երկրում կայունությունը ապահովելու եւ Բաշար Ասադի վրա լրացուցիչ ճնշում գործադրելու էլ ինչպիսի հավելյալ միջոցներ են պետք ձեռնարկել», - Ադրբեջանի արտգործնախարարի հետ համատեղ մամլո ասուլիսին Բաքվում հայտարարել է Միացյալ Նահանգների պետքարտուղար **Հիլարի Քլինթոնը**:

Ինչո՞ւ հատկապես Բաքվում է Քլինթոնը նման հայտարարություն անում: «Նրան հարցրել են, պատասխանել է», - ստանդարտ մեկնաբանությունը թերեւս սա է: Բայց ինչո՞ւ հատկապես Ադրբեջանի մայրաքաղաքում են Քլինթոնից Սիրիայի հարցում լրացուցիչ մեկնաբանություններ «կորզել»: Այդ մակարդակի պաշտոնյաներին, հասկանալի է, հանպատրաստի հարցեր չեն տալիս: Առնվազն՝ որպեսզի բարձրաստիճան հյուրին անհարմար կացության մեջ չդնեն:

Հետեւաբար, ԱՄՆ պետքարտուղարը ցանկացել է հենց Բաքվում Սիրիայի վերաբերյալ «ուղղորդող» հայտարարություն անել: Տարածիորեն մի քանի օր առաջ Ադրբեջանի ԱԳՆ-ն ասել էր, թե «Սիրիայից դիվանագիտական ներկայացուցչությունը էվակուացնելու հարց ֆնարկվում է, բայց որոշում դեռեւս ընդունված չէ»: Քլինթոնն, այսպիսով, բաց տեքստով ասել է, որ Սիրիայի դեմ ճնշումները չեն թուլանալու: Ավելին, նա Սիրիայի նախագահ Ասադին անվանել է «ոչ ունակ»: Դա նշանակում է, որ Վաշինգտոնը Բաշար Ասադին այլեւս չի ընկալում որպես օրինական նախագահի: Ավելի պարզ ասած, Քլինթոնն ասել է, որ ԱՄՆ-ը ամեն ինչ անելու է Ասադին հեռացնելու եւ «Սիրիայում կայունություն հաստատելու համար»:

Մերձավոր Արեւելքի ռազմաքաղաքական իրավիճակի շուրջը գրեթե բոլոր հեղինակավոր վերլուծաբանները մի սցենար են ակնարկում՝ ԱՄՆ-ը եւ Իսրայելը կսկսեն Իրանի ռմբակոծումը միայն Սիրիայի «խնդիրը լուծելուց հետո»: Այս համատեքստում Քլինթոնի՝ Բաքվում արված հայտարարությունն այլ բան չի հուշում, քան՝ որ Իլհամ Ալիեւի հետ տետ-ատետ բանակցություններում Իրանի դեմ ռազմագործողությունների թեման բավական մանրամասնություններով ֆնարկվել է:

Կարելի է եզրահանգել, որ «ապահովության որոշակի երաշխիքներ ունենալու» պայմանով Իլհամ Ալիեւը վերջնականապես կողմնորոշվել է, եւ Իրանի դեմ ԱՄՆ-ի կամ Իսրայելի, կամ միաժամանակ երկուսի կողմից պատերազմի դեպքում Ադրբեջանը «մաս կկազմի կոալիցիոն ուժերին»: Պետք է սպասել, որ մոտ ժամանակներս Սիրիայում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը կհեռանա Դամասկոսից:

Անոնսավորված է, որ Տրապիզոնում առաջիկա օրերին կկայանա Թուրքիայի, Վրաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների հանդիպումը: Ըստ երեւույթին, շտապ խորհրդաստվությունների կարիք ծագել է ԱՄՆ պետքարտուղարի տարածաշրջանային այցի համատեքստում: Մանավանդ որ Քլինթոնը կայցելի Թուրքիա, որից հետո կհրավիրվի Տրապիզոնի «գագաթաժողովը»: Հավանաբար դրանից հետո էլ Ադրբեջանը կհայտարարի Սիրիայից իր դիվանագետներին էվակուացնելու մասին:

Ակնհայտորեն երկարաձգվում են նաեւ Թեհրանում Ադրբեջանի եւ Բաքվում Իրանի դեսպանների հետ անցկացվող խորհրդաստվությունները: Փաստացի Իրանը եւ Ադրբեջանը կանգնած են դիվանագիտական հարաբերությունների խզումից կեսքայլ հեռավորության վրա: Բաքվում Քլինթոնի հնչեցրած «վերջնագիրը», բնականաբար, Թեհրանում եւ Դամասկոսում կընկալվի այնպես, ինչպես ցանկացել է ԱՄՆ պետքարտուղարը: Բայց հարց է՝ դրանից իրավիճակը կայունացնելո՞ւ, թե՞ աղակայունացնելու հավանականությունը կմեծանա: Այս մտահոգության տեղն, ամեն դեպքում, Միացյալ Նահանգները չէ: Իսկ Ադրբեջանում կարծես իշխող վարչախումբը բռնել է անմեղսունակության ճանապարհը:

Վ. Ա.

Փաստացի պատերազմ կամ ադրբեջանական շանտաժ Հիլարի Քլինթոնին

1-ին էջից

ՊԲ-ն տեղեկացնում է ադրբեջանական կողմի կորուստների մասին, նշելով, որ կորուստներ է ունեցել նաեւ հայկական կողմը: «Ադրբեջանական դիվերսիոն խմբի վնասազերծման գործողության ժամանակ զոհվել է կրտսեր սերժանտ Վարդան Ռոբերտի Օհանյանը, վիրավորվել են շարքային զինծառայողներ Արայիկ Գեղամի Մավրեյանը եւ Վոլոդյա Յուրայի Ծաստյանը»:

Վերջին մի քանի օրերի դիվերսիաների փորձերը գալիս են ապացուցելու, որ Ադրբեջանում փորձում են աշխարհին համոզել «սաստուս քվոյի» անընդունելիության «արդիականությունը», սակայն զոհերի պարագայում հաստատվում է ճիշտ հակառակը, որ սաստուս քվոն առավել նախընտրելի է փաստացի պատերազմական վիճակից, երբ սահմանին ու շփման գծում ամեն օր միջադեպ է գրանցվում, այս կամ այն կողմում զոհեր են լինում, իսկ ադրբեջանական «փաստարկների» հիմնական լսարան դիտվող միջազգային հանրությունն էլ տառացիորեն հայտնի կենդանու ականջում ֆնած է կամ ֆնած է ձեւանում՝ սեփական գրպաններն ու տարածաշրջաններում շահերը չվնասելու համար անգամ դատապարտման խոսք չասելով:

Ադրբեջանում, բնականաբար, նախընտրում են կրակի վրա յուղ լցնել, այսինքն՝ առավել խառնաշփոթ ու անհասկանալի իրավիճակ ստեղծելու նպատակով կարծես ադրբեջանական մամուլն ամենաանհեթեթ տեղեկություններն է տարածում: Նախ, որ դիվերսիոն գործողությունների են դիմում հայկական կողմերը, ինչն այնքան էլ տրամաբանական չէ՝ թեկուզ հակամարտության կարգավորման գործընթացների ու բանակցությունների առնչությամբ Հայաստանի ու Լեռնային ղարաբաղի ունեցած դիրքորոշման առումով:

Մյուս կողմից, «Vesti.az»-ը, հղում անելով Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությանը, հայտնում է. «Հայերը հրադադարի ռեժիմը խախտել են շփման ողջ գծի երկայնքով», ընդ որում՝ ադրբեջանական կողմը կորուստներ չունի: Ավելին, Հորադիզի մոտակայքում տեղի ունեցածի առնչությամբ ադրբեջանական տարբերակում նշվում է, թե հայկական կողմն է դիվերսիայի փորձ արել ու կորուստներ կրել:

Եթե այսօրինակ հաղորդագրությունները սեփական ժողովրդի «ոգին» բարձրացնելու համար են, ապա առնվազն անմիտ են նման փորձերը, քանի որ, զուտ Ադրբեջանի ավանդույթների ուժով, ադրբեջանական կողմը սեփական կորուստների մասին նախընտրում է հայտնել տարբեր պատճառներով ու ժամանակներում, բայց ոչ իրապես նշելով դեպքի վայրն ու ճիշտ ժամանակը: Այս անգամ էլ «անկորուստ» ադրբեջանական կողմը տեղեկացնում է, որ, նախ, երկու ադրբեջանցի զինծառայողներ «դժբախտ պատահարի» հետեւանքով զոհվել են, մեկն էլ վնասվածքներ է ստացել: Հետաքրքրական է, որ հենց Ղազախի շրջանից հաղորդվող տեղեկությամբ նշվում է, թե երկու զինծառայողները մահացել են «բետոնե սալիկի ընկնելուց տակը մնալով»:

Քիչ ավելի ուշ արդեն «Ազերիպրես» գործակալությունը տարածեց հաղորդագրություն, թե շփման գծի Թերթերի հատվածում ադրբեջանցի մեկ զինծառայող վնասվածքներ է ստացել ականի վրա եւ ներկայումս գտնվում է միջին ծանրության վիճակում:

Դժվար թե այս «դժբախտ պատահարները» պատահականությունների շարքից են, այն էլ հատկապես այս օրերին, երբ փաստացի պատերազմական վիճակ է ստեղծվել: Զոհերի թիվն ավելանում է, լռությունն էլ այդ առնչությամբ դառնում առավել անտանելի: Ով էլ ինչ-որ բան է բարձրաձայնում, առավել անտանելի է դարձնում մյուսների լռությունը, նկատի ունենալով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները լռում են, իրադարձությունների ընթացքում տարածաշրջանի մեկ մայրաքաղաքից մյուսը տեղափոխվող ԱՄՆ պետքարտուղարը, ըստ «The Irish Times»-ի՝ «մտահոգ» զանգում է Վաշինգտոն ու երեւի բողոքում իրավիճակից: Իսկ Թուրքիան, «Զաման» պարբերականի տեղեկացմամբ, ի դեմս արտգործնախարարության հատուկ ներկայացուցիչ Սելջուկ Ունալի, հայտարել է «մտահոգություն» հայտնել, շեշտելով, թե Թուրքիան հետեւում է իրադարձությունների զարգացմանը:

Մնում է հավելել, որ փոխադարձ կրակոցներն ու գծերից այս ու այն կողմ զոհերը չեն կարող որեւէ մեկի ուրախության առիթը լինել: Պատերազմն իր բոլոր դեմքերով միայն արհավիրք է բերում, ուստի ուղղակի հրամայական է դարձել բոլոր իրավասու եւ ներգրավված կողմերին խաղաղության պահանջ, անգամ պարտադրանք ներկայացնելը:

Հայաստան

Մեսրոպ Մութաֆյանն անգործունյա է, բայց դեռեւս համարվում է Պոլսո պատրիարք

Պոլսահայերը պահանջում են նոր պատրիարքի ընտրություն

Թեմեն արդեն 2 տարի Արամ արքեպիսկոպոս Աթեշյանն ընտրվել է Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Մութաֆյանի փոխանորդ (արքեպիսկոպոսի օգտին քվեարկել է Պոլսո պատրիարքարանի 26 հոգուց բաղկացած հոգեւոր խորհրդի անդամներից 25-ը), պոլսահայերի մի մասը նրան չի ընդունում այդ պաշտոնում՝ շարունակելով պահանջել նոր ընտրություններ եւ համայնքի տեսակետն ու ցանկությունները արտահայտող պատրիարք: Համայնքի եւ պատրիարքարանի միջեւ խմորումները սկսվեցին մի քանի տարի առաջ, երբ պարզ դարձավ, որ Պոլսո պատրիարք Մեսրոպ Մութաֆյանը տառապում է հիշողության կորուստով, անգործունյա է եւ անկարող իրականացնել պատրիարքի պարտականությունները: Թուրքիայի ներքին գործերի նախարարության հավանությամբ պատրիարքի փոխանորդ նշանակվեց Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը: Համայնքի ցանկությանը՝ ընտրել նոր պատրիարք, ընդդիմացան ոչ միայն

Սարգիս Սերոբյան

պատրիարքարանի ներկայացուցիչները, այլեւ ներքին գործերի նախարարությունը: Պաշտառաբանությունը հետեւյալն է. քանի դեռ Մեսրոպ պատրիարքը ողջ է, անհնար է իրականացնել նոր ընտրություն: Պոլսո հայոց պատրիարքարանի հրատարակչության եւ թանգարանի պատասխանատու **Վաղարշակ սարկավագը «Ազգի»** հետ զրույցում անդրադառնալով վերոնշյալ իրավիճակին՝ շեշտում է, որ խնդիրը չի լուծվի այնքան ժամանակ, քանի դեռ Մութաֆյանը ողջ է:

«Սրբազանի առողջությունը քայքայված է: Սակայն իր հիվանդ վիճակով գրեթե կայուն է: Նրա առողջական վիճակը վատթարանում է, սակայն շատ դանդաղ ընթացքով: Պատրիարքի պարտականությունները կատարել նա ի վիճակի չէ: Ղեկավարվում ենք պատրիարքական ընդհանուր փոխանորդի համակարգով, քանի որ ժամանակին, երբ պատրիարքական աթոռն առաջարկեց աթոռակցի համակարգ որդեգրել, համայնքի մի հատվածը դեմ էր: Նրանց ներկայացմամբ՝ մեր ավանդության մեջ չկա աթոռակցի համակարգ, սակայն մեր ավանդության մեջ տկարամտություն, հիշողության կորուստ կոչվող հիվանդությունն էլ չկար: Հարյուր հիսուն տարի առաջ, երբ Ազգային սահմանադրությունը գրվեց, նման հիվանդության մասին չէինք էլ լսել: Այս անգամ հարցը մնաց կիսատ ու աթոռակցի համակարգը չգործեց: Ընդունեցինք այնպիսի որոշում, որն առավելապես մերձավոր էր Ազգային սահմանադրությանը: Համաձայն սահմանադրության, մինչեւ Մութաֆյանի վախճանը պատրիարքը նա է: Մենք էլ չենք կարող դեմ լինել, քանի որ ազգի ընտրածն ինքն է՝ սկսյալ 1998-ից: Մինչեւ իր երկրային կյանքից քաշվելը, Մութաֆյանը կկոչվի Պոլսի Հայոց պատրիարք», ասում է Վաղարշակ սարկավագը:

Համայնքի ներկայացուցիչներից, «Ակօս» թերթի հայերեն էջերի պատասխանատու **Սարգիս Սերոբյանն** իրավիճակի վերաբերյալ այլ գնահատական եւ տեսակետ է հայտնում: Նրա ներկայացմամբ՝ պոլսահայերի ընկալմամբ իրենք պատրիարք չունեն: «Պատրիարքը հիվանդացավ, որոշեցինք, որ նոր պատրիարք ընտրվի, սակայն հենց ընտրության օրն ասացին, թե պատրիարքը ողջ է, հնարավոր չէ ընտրություն անցկացնել: Համոզված եմ, որ սա թուրքական իշխանությունների գաղափարն է: Ջեռնտու միտք է, որովհետեւ պատրիարքի աթոռին այսօրվա տիրողները, փոխանորդները պետությունից համաձայնեցված մարդիկ են: Այդ կերպ թուրքական իշխանություններին ընդհանուր, իրենց կամակատարությունները չընդունող եւ վիճաբանող պատրիարք ձեռնտու չէ: Ներկայիս մարդիկ հենց այդպիսին չեն: Հենց այդ պատճառով ընդհանուր փոխանորդի ձեւը մտցրեցին, որ կառավարության ուզած մարդը պաշտոնավարի», ասում է Սերոբյանը՝ հավելելով, որ հենց այս հարցում է թաքնված համայնքի դժգոհության հիմքն ու դրանով է պայմանավորված համայնքի՝ նոր պատրիարք ունենալու ցանկությունը:

Վաղարշակ սարկավագ

«Համայնքն ուներ թեկնածուներ, սակայն ընտրությունը կասեցվեց: Եթե ընտրություններ լինեն, ապա համայնքը ամենալավ թեկնածուին կընտրի», ասում է Սերոբյանը՝ հավաստիացնելով, որ կան արժանիներ, ովքեր առավել դրական համբավ ունեն համայնքում, քան Աթեշյանը: «Վերջերս պատրիարքի փոխանորդը սկսել է նյութականով ժողովրդին սիրաշահել: Այդ կերպ նա փորձում է իր դիրքը զորացնել, սակայն դա էլ չի օգնի: Ոչ միայն հայախոս, այլեւ ոչ հայախոս թուրքահայերը դեմ են Աթեշյանին», հավաստիացնում է Սերոբյանը:

Վերջինիս գնահատմամբ՝ սա լուրջ խնդիր է համայնքի համար, քանի որ պոլսահայերի պրոբլեմները վերջին տարիներին բազմապատկվել են: «Խառնամուսնություններն ու կրոնափոխ լինելն էլ մի նոր խնդիր են: Պոլսահայությունը տարեցտարի ավելի այլասերվում է, ազգային գիտակցությունն ավելի է պակասում: Դադարում են խոսել հայերեն, հակառակ այն հանգամանքին, որ ունենք մեկ տասնյակից ավելի հայկական դպրոցներ: Շրջանավարտները հազիվ գրել-կարդալ են սովորում, սակայն լրագիր ընթերցել էլ չեն կարողանում: Եվ այս պարագայում սկսվում է այլասերումը: Լեզուն հետ քայլ է անում եւ հեռանում պոլսահայերից: Իսկ քանի որ լեզուն տկար է, հայկական մշակույթն ու գիտակցությունն էլ են տկար: Այդ ժամանակ սկսվում են խառնամուսնությունները, ինքնափոխությունը», ասում է Սերոբյանը՝ շեշտելով, որ խառնամուսնությունները հակառակ սեռի գեղեցկությամբ կամ խելքով պայմանավորված չեն: Նա հիշում է, որ ինչպես իր երիտասարդության տարիներին, այնպես էլ այսօր փողոցում կարելի է հանդիպել բազմաթիվ գեղեցիկ թրուհիների, սակայն պատճառը միայն գեղեցկությունը չէ: «Մշակույթներն են մոտիկացել, ընդհանուր մտածելակերպ կա: Հայկականը նվազել է, թուրքականը՝ դարձել գերիշխող»:

Համայնքի համար եւս մեկ լուրջ խնդիր է Ստամբուլում կարգավիճակ չունեցող եւ անլեգալ ապրող հայաստանցիների հարցը, որոնց հարաբերությունները պոլսահայերի հետ այնքան էլ լավ չեն: Այդ փաստը բազմիցս հաստատել են նաեւ հայաստանցիները՝ ընդգծելով, որ պոլսահայերն իրենց արհամարհում են՝ հայտարարելով, թե խայտառակում են համայնքն ու հայությանը:

«Այն պահից սկսած, երբ հայաստանցիները ապրուստ հայթայթելու եւ գոյությունը պահպանելու նպատակով սփռվեցին ամբողջ աշխարհում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Թուրքիա, բացասական արձագանք ստացան տարբեր համայնքներում: Տեղացի հայերը, այդ թվում՝ թուրքահայերը, հայաստանցիների հետ լարված հարաբերություններ ունեն»: Նա շեշտում է, որ պատճառները տարբեր են՝ ստորացուցիչ աշխատանքից մինչեւ գողություն եւ մարմնավաճառություն: Անձամբ դեմ է, որ հայաստանցիները գան Ստամբուլ, ապրեն եւ աշխատեն այնտեղ: Այս խնդիրը նա առաջին հերթին դիտարկում է ազգային անվտանգության տեսանկյունից: «Չեմ ուզում, որ Հայաստանը հայաթափվի», ասում է նա՝ խոստովանելով, որ այս պահին պետք է դառնալ նրանց օգնող: «Սակայն կան բազմաթիվ պոլսահայեր, որոնք դեմ են նրանց, արհամարհում են, երբեմն վիրավորում: Պոլսահայերը ծանր եւ ցավագին են տանում, որ Հայաստանից եկողները ստորացուցիչ եւ նվաստացուցիչ աշխատանքով են զբաղվում: Դա վիրավորում է նրանց արժանապատվությունը: Ցավալի է, որ գիտնականները գալիս են Ստամբուլ եւ բեռնակրություն անում, տան մաքրությամբ զբաղվում կամ հիվանդների խնամում: Դժբախտաբար շատերը ոչ ազնիվ գործերով են զբաղվում՝ գողությունից մինչեւ մարմնավաճառություն: Երբ լսում ես, որ հայ երիտասարդ աղջիկը գալիս է Ստամբուլ եւ պոռնկությամբ զբաղվում՝ դա հուսախաբ է անում հայրենիքի հանդեպ ունեցած բոլոր զգացողությունները», ասում է՝ հավելելով, որ սա ազգային անվտանգության խնդիր է, կառավարությունը պետք է առավել մտահոգվի եւ միջոցներ ձեռնարկի հայաթափման դեմն առնելու համար:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ստամբուլ, Թուրքիա

«Հայ զինվորականությունը Բյուզանդական կայսրությունում»

Հակամարտություն ու դաշնություններ Հուստինիանոս եւ Մավրիկիոս կայսրերի օրոք

«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի հիմնադիր տնօրեն, պատմաբան եւ քաղաքագետ Արմեն Այվազյանի անգլերեն լեզվով լույս ընծայած նոր գիրքը՝ «Հայ զինվորականությունը Բյուզանդական կայսրությունում» («The Armenian Military in the Byzantine Empire», Ed. Sigest, 128 pages, Alfortville) խորագրով, երեւան է հանում հայ զինվորականության եւ Բյուզանդական կայսրության հետ նրա բարդ հարաբերությունների պատմության ամենաքիչ ուսումնասիրված, սակայն եւ ամենափոթորկալից շրջաններից մեկը:

Ըստ խմբագրությանը հաստեցված՝ գիրքը ներկայացնող շրջաբերականի, ուսումնասիրության առաջին մասում Այվազյանը ձեռնամուխ է եղել Հուստինիանոս կայսեր կառավարության դեմ 538-539 թթ. բռնկված հայկական ապստամբության ռազմաքաղաքական վերլուծությանը: Բացահայտելով հայկական ուժերի կիրառած զանազան մարտավարական տարրերն ու հնարամտությունները՝ նա հատուկ ուշադրություն է դարձրել հայոց զինուժի ավելի վաղ եւ ավելի ուշ շրջաններում իրականացրած ռազմական գործողություններին, ներառյալ բարձր ռիսկայնության առաքելություններին, ինչպիսիք էին թշնամի հրամանատարների սպանությունները ու գաղութարարական վարչակարգերի ղեկավարների դեմ կազմակերպված մահափորձերը:

Հատորի երկրորդ մասում Այվազյանը քննարկել է բյուզանդացիների վերաբերմունքը հայերի եւ հայկական զինուժի հանդեպ՝ բացահայտելով, որ հակահայկական դրսեւորումների շարունակականությունը հռոմեական նույնանման նախապաշարմունքների



հետ աշխարհաքաղաքական պատճառներ ուներ:

Գրքի առաջաբանում Ֆիննական բյուզանդագիտական ընկերակցության փոխնախագահ, ռազմական պատմաբան դոկտոր **Իլկա Սայվանը**, բարձր գնահատելով կատարված աշխատանքը, գրել է. «Դոկտոր Այվազյանը կարողացել է իրագործել գրեթե անկարելի մի առաջադրանք: Նա ցույց է տվել, որ հակառակ պատմական վկայությունների սակավությանը, կարելի է ամբողջովին նոր մոտեցումով, հավաստի եւ լավ հիմնավորված կերպով վերականգնել 538-539 թթ. հայոց ապստամբության պատմությունը»:

Ընդհանուր առմամբ՝ գրքի թեման հայերի դիմադրողական շարժումն է ընդդեմ Բյուզանդական կայսրության վարած գաղութարարական քաղաքականության:

Ավելացնենք, որ շահելով Կարնեգի/IREX-ի ու Ֆուլբրայթի անվան ամերիկյան եւ Ալեքսանդր Օնասիսի անվան հունական կրթաթոշակները՝ դոկտոր Այվազյանը ռազմավարական հարցերի գծով շուրջ երկու տարի ուսումնասիրություններ է կատարել ԱՄՆ-ի Սիրակուզի եւ Ստանֆորդի համալսարաններում, Հունաստանի գիտահետազոտական կենտրոններում: Հեղինակ է մի շարք հոդվածների եւ գրքերի, այդ թվում՝ «Հիմնաստարքեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», «Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում», «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն», «Մայրենի լեզուն եւ ազգայնականության սկզբնավորումը. հայկական եւ եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն», «1720-ականների հայկական ապստամբությունը եւ ցեղասպանական ճնշամիջոցների սպառնալիքը» եւ այլն:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանների հրատապ կոչը Թուրքիային

Հակառակ արձանագրված բարեփոխումներին եւ առաջադիմությանը՝ Թուրքիայում «զգայուն» թեմաներով արտահայտվող մարդիկ դեռեւս թիրախ են դառնում լուրջ հետապնդումների: Նման եզրակացության են եկել «Մարդու իրավունքների համար պայքարողների պաշտպանության դիտակայանը» (Obs), որը հունիսի 5-ին հրապարակել է երկու կազմակերպությունների՝ «Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիայի» (FIDH) եւ «Ընդդեմ կտանջների համաշխարհային կազմակերպության» (OMCT) համատեղ զեկույցը, որտեղ քննության է առնվում Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանների իրավիճակը:

«Զգայուն» թեմաների շարքում նշված են այլընտրանքային ինքնությունների (էթնիկական, կրոնական, հատկապես քրդական եւ սեքսուալ փոքրամասնությունների) իրավունքների բարձրաձայնումը, պետական կառույցների քննադատությունը (ներառյալ դատական իշխանությունների եւ բանակի ներսում տիրող խախտումները), ոստիկանության ձեռնարկած պատժամիջոցներն ընդդեմ գրողների, իրավաբանների, լրագրողների, արհմիության աշխատողների եւ ոչ կառավարական կազմակերպությունների:

Ճնշումներն ու պատժամիջոցները հնարավոր են դառնում կիրառել քրեական եւ հակաահաբեկչական օրենքների որոշակի հոդվածների առկայության պայմաններում: Իրավական մարմինների աշխատակիցները սովոր են սահմանափակումներ դնելու գործելաոճին եւ օրենքը մեկնաբանում են այդ տեսանկյունից: Հակաահաբեկչական օրենքն, օրինակ, վերջին տարիներին գործադրվել է ընդդեմ մարդու իրավունքների պաշտպանների:

«Արդարությունը օգտագործվում է որպես զենք՝ ճնշելու, վախեցնելու եւ պատժելու այդ պաշտպաններին: Նման ավտորիտար գործելաոճին պետք է վերջ դրվի», նշել է FIDH-ի նախագահ տիկին Սուհայր Բելհասենը:

Վերոնշյալ զեկույցի տվյալներով, 2012-ի սկզբներին հիմնականում ահաբեկչության մեղադրանքներով բանտախուցերում են գտնվել 105 լրագրողներ, 44 իրավաբաններ, մարդու իրավունքների առնվազն 16 պաշտպաններ եւ արհմիության 41 աշխատակիցներ:

«Մարդու իրավունքների համար պայքարողների պաշտպանության դիտակայանը» կոչ է անում Թուրքիայում ամենալուրջ ուշադրությունը դարձնել զեկույցում նշված հանձնարարություններին եւ անհրաժեշտ քայլեր կատարելու համար ապահով պայմաններ ստեղծել մարդու իրավունքների պաշտպանների գործունեության համար:

Հ. Ծ.

Ուսումնասիրություն Թուրքիայի հրեաների մասին

Տորոնտոյի «Զորյան» ինստիտուտից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ լույս է ընծայել անգլերեն թարգմանությամբ **Ռիֆաթ Բալիի** «Model Citizens of the State: The Jews of Turkey During the Multi-Party Period» («Պետության օրինակելի քաղաքացիները: Թուրքիայի հրեաները բազմակուսակցական ժամանակահատվածում») հատորը, որը քննարկում է հրեական համայնքի հանդեպ վերաբերմունքը Թուրքիայում 1950-ական թվականներից մինչեւ մեր օրերը, հրեաների պայքարը հակասեմական դրսեւորումների դեմ ու հանուն սահմանադրական իրավունքների ձեռքբերման:

Հեղինակը 1948-ին Ստամբուլում ծնված անկախ գիտնական է, որը մասնագիտացել է Թուրքիայում ապրող հրեաների պատմության բնագավառում: Թղթակից անդամ է Ալբերտոն-Բենվենիստե կենտրոնի (Փարիզ, Սորբոն) եւ 2009 թվի նույն կենտրոնի գիտական հետազոտությունների մրցանակակիր: Խոսելով գիրքը գրելու դրդապատճառների մասին՝ նա նշել է. «Ձանձրացել էի նույն վարդագույն ներբողականները լսելով Թուրքիայի առաջնորդներից եւ տեղի հրեական համայնքի ներկայացուցիչներից: Ցանկացա բացահայտել ճշմարտությունը»: Նա բացատրում է, որ հակառակ ներկայացված պատկերին, թե իբր հրեաները շատ լավ հարմարվել են պետության օրինակելի քաղաքացի լինելու քեմալական բնորոշմանը, չափազանց մեծ է դեռեւս երկրում հակասեմական մթնոլորտի ազդեցությունը: 1923-49 թվերին հրեական համայնքը միեւնույն վերաբերմունքին էր արժանանում, միեւնույն վախին ու սպառնալիքներին էր փորձում դիմակայել, ինչ հայկական եւ հունական համայնքները:

«Վերաբերմունքը փոխվեց 60-ականների վերջերին եւ 70-ականների սկզբներին հիմնականում 3 գլխավոր պատճառներով. 1967 թվի 6-օրյա արաբա-իսրայելական պատերազմը, 1974 թվի Կիպրոսի մի հատվածի գրավումը եւ Հայոց ցեղասպանության ճանաչմանը միտված միջազգային գործընթացը: 1970-ականներին թուրքական կառավարությունը, փոխելով իր քաղաքականությունը, թույլատրեց հրեաներին կամ հաստատել իրենց ամերիկյան կազմակերպությունների հետ եւ նրանց միջոցով փորձել ճնշել Հայոց ցեղասպանության ճանաչումը Ամերիկայի կառավարության կողմից», ասում է հեղինակը:

Գրքի թուրքերեն տարբերակի լույս ընծայման առթիվ մարդու իրավունքների ասոցիացիայի անդամ, թուրք լրագրող **Ահմետ Գյունայսուն** «Արմինյն Ուիֆլի» շաբաթաթերթում գրել է. «Գիրքը երեւան է հանում փաստեր, որոնք ապացուցում են, թե ինչպես թուրք կառավարող շրջանակները շանտաժի են ենթարկել երկրի հրեական համայնքին եւ նրա միջոցով նաեւ Մ. Նահանգների հրեական կազմակերպությունների ներկայացուցիչներին, պահանջելով նրանցից պաշտպանել թուրքական դիրքորոշումը ընդդեմ Հայկական ցեղասպանության ճանաչման: Նրանք հավաստիացրել են, թե հակառակ դեպքում չեն կարող երաշխավորել հրեաների անվտանգությունը Թուրքիայում»:

Պատասխանելով լրագրողների հարցերին՝ Ռիֆաթ Բալին ասել է. «Չեմ կարծում, որ գրքի անգլերեն տարբերակի հրատարակումը բացասական ազդեցություն ունենա իսրայելա-թուրքական հարաբերությունների վրա, բայց վստահ եմ՝ անգլիախոս հասարակությունը դրանով ավելի ճիշտ եւ իրական պատկերացում ունենալու հնարավորություն կստանա այդ հարաբերությունների վերաբերյալ»:

Հատորը անգլերեն լեզվով հրատարակել է Ֆերլի Դիկինսոն համալսարանի (Fairleigh Dickinson University) հրատարակչությունը:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

Օբաման Աբբասին մեղադրում է բանակցությունների ձախողման մեջ

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կարծում է, որ Պաղեստինի ազգային վարչակազմի նախագահ Մահմուդ Աբբասը, ըստ երեւույթին, առհասարակ շահագրգռված չէ Իսրայելի հետ խաղաղության հաստատմամբ: Այդ մասին նա հայտարարել է ԱՄՆ ուղղափառ հրեական համայնքների առաջնորդների հետ հանդիպման ժամանակ

Օբաման նաեւ երկյուղ է արտահայտել, որ պաղեստինա-իսրայելական հաշտության հասնելու հնարավորությունն արդեն բաց է թողնված: Այդուհանդերձ նա խոստացել է հնարավոր ամեն ինչ անել «երկու պետություն երկու ժողովուրդների համար» սկզբունքի իրականացման նպատակով: Նրա խոսքերով, կարգավորման ժամանակ անկյունաքար պետք է դառնան Իսրայելի անվտանգության շահերը:

Հատկանշական է, որ անցյալ շաբաթավերջին Օբաման եւս կես տարով երկարաձգեց ԱՄՆ դեսպանատունը Թել Ավիվից Երուսաղեմ տեղափոխելու արգելքը: Դեսպանատան տեղափոխման վերաբերյալ Կոնգրեսը օրենք էր ընդունել դեռ 1995-ին, սակայն Քլինթոնի, Բուշի եւ Օբամայի վարչակազմերը հրաժարվել էին դա կատարել: Վաշինգտոնում համոզված են, որ դեսպանատան տեղափոխությունը բարդություններ կհարուցի միջազգային ասպարեզում:

ԴԱՄԱՍԿՈՍ

Սիրիայում գեներալ է սպանվել

Նշանակվել է նոր վարչապետ

Սիրիացի ապստամբները սպանել են բրիգադային գեներալ Անվար ալ Սաֆֆային: SANA գործակալությունը հաղորդում է, որ նրա ավտոմեքենայի տակ ամրացված պայթուցիկ սարքը պայթել է Դամասկոսի շրջակայքում մեքենայի շարժման ժամանակ:

Պայթյունի հետեւանքով տուժել են գեներալի՝ քննության ցատրող դուստրը եւ վարորդը: Գործակալությունը նշում է, որ Սաֆֆան պաշտոնապես չէր ծառայում սիրիական բանակում, այլ բարձր պաշտոն էր զբաղեցնում «Պաղեստինի ազատագրության բանակում»: Սիրիայում այս կազմակերպությունը համարվում է անկախ, սակայն փաստորեն սիրիական բանակի բաղկացուցիչ մասն է:

Գրեթե միեւնույն ժամանակ Դեր Զոր քաղաքում սպանվել են եւս երկու բարձրաստիճան սպաներ՝ գնդապետ Ահմադ Խաթթաբը եւ փոխգնդապետ Իզզեդդին Սվեյդանը: Անվար ալ Սաֆֆան Սիրիայի հակամարտության ժամանակ սպանված առաջին գեներալն է: Բոլոր 3 սպանությունները իրականացվել են այն բանից հետո, երբ ապստամբները հայտարարել են, որ այլեւս չեն կատարելու զինադադարի պայմանները եւ անցնելու են վարչակարգի հետ բացահայտ դիմակայության:

Նաեւ հաղորդվում է, որ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը երկրի վարչապետի պաշտոնում նշանակել է Ռիադ Հիջաբին՝ նրան հանձնարարելով կազմել նոր կառավարություն: Այդ մասին երեկ հաղորդեց Սիրիայի պետական հեռուստատեսությունը:

Մինչեւ վերջերս Ռիադ Հիջաբը զբաղեցնում էր գյուղատնտեսության նախարարի պաշտոնը: Վարչապետի պաշտոնում նա կփոխարինի Ադել Սաֆարին, որը վարչապետ էր դարձել անցյալ տարվա ապրիլին՝ երկրում անկարգությունները սկսվելուց հետո:

ԱՄՆ-ը հաստատեց «Ալ Ղաիդայի» երկրորդ դեմքի սպանությունը

ԱՄՆ իշխանությունները պաշտոնապես հաստատել են Աբու Յահյա ալ Լիբիի սպանությունը, որին նրանք համարում են «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցի երկրորդ դեմքը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Սպիտակ տան մամլո քարտուղար Ջեյ Քարնին չի մանրամասնել, թե ինչպես է սպանվել ահաբեկիչը: Ավելի վաղ ամերիկյան անանուն աղբյուրների վկայակոչմամբ հաղորդվել էր, որ ահաբեկիչը վիրավորվել կամ սպանվել էր Պակիստանի հյուսիսում հունիսի 4-ին ամերիկյան անօդաչու ինքնաթիռի գրոհի ժամանակ:

Պակիստանյան հետախուզությանը վկայակոչելով, Ասոշիեյթեդ պրեսը հաղորդում է, որ հարվածը հասցվել է այն տանը, որտեղ եղել է Լիբին:

Սպիտակ տանը հայտարարել են, որ Լիբիի ոչնչացումը անչափ ուժգին հարված է հասցրել «Ալ Ղաիդային» եւ դրա դեմ մղվող պայքարում Ուսամա բեն Լադենի սպանությունից ի վեր խոշորագույն հաջողությունն է:

Հաղորդվում է, որ ալ Լիբին, որին 2005-ին հաջողվել էր Աֆղանստանում փախչել ամերիկյան զինվորական բանտից, ակտիվորեն մասնակցել էր այն բանին, որ «Ալ Ղաիդան» ահաբեկչական խմբավորումից վերածվի ողջ աշխարհը ընդգրկող ճյուղավորված ցանցի:

Աբու Յահյա ալ Լիբին կազմակերպությունում երկրորդ դեմքը դարձավ այն բանից հետո, երբ բեն Լադենի փոխարեն առաջնորդ դարձավ Այման ալ Զաուահիրին:

Քարնիի խոսքերը վկայակոչելով Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ալ Լիբին Պակիստանի տարածքում կառավարում էր «Ալ Ղաիդայի» բոլոր գործողությունները եւ համակարգում կազմակերպության բաժանմունքների աշխատանքը:

Պայթյուն Ղանդահարի օդանավակայանում

Աֆղանստանի հարավում՝ Ղանդահար քաղաքի օդանավակայանի մոտակա կայանատեղում երեկ սաստիկ պայթյունի հետեւանքով զոհվել են 21 խաղաղ բնակիչներ, տասնյակ մարդիկ վիրավորվել են: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը աֆղան իրավապաշտպաններին վկայակոչելով հաղորդում է, որ պայթուցիկ սարքը գործի է դրել մոտոցիկլետով անցած մահապարտ ահաբեկիչը: Պայթյունի պահին կայանատեղում եղել են ավիավառելիքով լի տասնյակ ցիստեռներ, որոնք նախատեսված էին Աֆղանստանում տեղաբաշխված միջազգային կոալիցիոն ուժերի համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՇԱՐՔԻՑ

Ժիրայր Շահրիմանյան

Ծնվել է 1988 թ. փետրվարի 5:

«Ես այն կոմպոզիտորներից եմ, ով միշտ ափսոսում է»,- Ժիրայր Շահրիմանյան:

2012 թ. հունիսի 4-ին «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ հանդիպում երիտասարդ կոմպոզիտոր, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի հատուկ մրցանակակիր Ժիրայր Շահրիմանյանի հետ: Հանդիպման ընթացքում, որ կրում էր «XXI դարի ակադեմիական երաժշտության միտումները» խորագիրը, ներկաները ունկնդրեցին կանադացի կոմպոզիտոր Ջոն Բըրջի «Ֆլանդրիայի դաշտավայրերի պատկերները» կամերային նվագախմբի համար ստեղծագործությունից հատվածներ (2006 թ, «Սիմֆոնիա Տորոնտո» կամերային նվագախմբի կատարմամբ, Կանադա), ինչպես նաեւ Շահրիմանյանի ստեղծագործություններից՝ «Սերենադ» կամերային նվագախմբի համար (2009 թ. «Սիմֆոնիա Տորոնտո» կամերային նվագախմբի կատարմամբ եւ հեղինակի ներկայությամբ), «Vidi aquam» խառը երգչախմբի համար (2007 թ., «Մարի Մագդալեն» երգչախմբի կատարմամբ, Կանադա), «Էլեգիա» ջութակի եւ կամերային նվագախմբի համար (2006 թ., Հայաստանի պետական կամերային նվագախումբ, ջութակ՝ Ջեմմա Աբրահամյան) եւ Ջորջ խմբերգ Ավետիք Իսահակյանի խոսքերով:

Ներկայացնելով եւ ընդհանրական ձեւով վերլուծելով Բըրջի եւ իր գործիքային ստեղծագործությունները, կոմպոզիտորը նվագախմբային մտածելակերպի որոշ նմանություններ էր գտել, որը տվյալ դեպքում իսկապես նկատելի էր:

Նշենք, որ Շահրիմանյանը սովորել է ԵՊԿ-ի կոմպոզիցիայի բաժնում, կոմպոզիտոր, պրոֆեսոր՝ Մարտուն Իսրայելյանի դասարանում: Ստեղծագործում է հիմնականում կամերային ինչպես նաեւ խմբերգային ժանրերում: Երկուսն էլ հավասարազոր նշանակություն ունեն կոմպոզիտորի համար: Ըստ նրա, սեփական գործիքային ստեղծագործությունները բխում են խմբերգային ստեղծագործություններից: Միեւնույն ժամանակ նշեց, որ շատ է հիանում լարային նվագախմբի ֆանտաստիկ հնարավորություններով, եւ մտադիր է հետագայում նորից գրել նման կազմերի համար:

Շահրիմանյանի ստեղծագործությունները կատարվում են Հայաստանում եւ արտերկրում: Մայիսի 19-ին եւ 21-ին Երիտասարդ կոմպոզիտորների կամերային երաժշտության երկրորդ փառատոնի շրջանակներում կատարվեցին նրա «Էլեգիան» ջութակի եւ լարային նվագախմբի համար (Հայաստանի պետական կամերային նվագախմբի կատարմամբ, դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան, ջութակ՝ Ջեմմա Աբրահամյան), եւ Ջորջ խմբերգը Ավետիք Իսահակյանի խոսքերով խառը երգչախմբի համար a capella (կատ.՝ Հայաստանի պետական կամերային երգչախումբ, դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան):

Շահրիմանյանի երկերին բնորոշ է ոչ ցայտուն արտահայտված որոշակի անհանգստությունը եւ ներքին զսպվածությունը: Նա ստեղծագործում է մեծ եռանդով ու ջանասիրությամբ: Վերջերս ստացել է պատվեր Կանադայից եւ այժմ աշխատում է «Դաշնամուրային էտյուդներ» ստեղծագործության վրա:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Երաժշտագետ, կոմպոզիտոր

Հայ կրթական հիմնարկութիւն

Դոկտ. Ալբերտ Մելիք Ղասումեանը նւիրեց $234,000

Գլենդէյլ - Հայ կրթական հիմնարկութիւնը (ՀԿՀ) ուրախութեամբ յայտնում է, որ բոստոնաբնակ դոկտ. Ալբերտ Մելիք Ղասումեանը նւիրել է $34,000 Արցախի երկու գիւղերի դպրոցների եւ $200,000 Արցախի Պետական համալսարանի հանրակացարանի վերանորոգման համար:

Արցախի Պետական համալսարանի աշակերտներն եւ ուսուցչակազմը մայիս 10-ին օտնեցին վերանորոգած հանրակացարանի շէնքի բացումը: Ներկայ էին Արցախի պետական պաշտօնեաներ, Հայ կրթական հիմնարկութեան վարչութեան անդամներ, եւ նախագծի առաջաձեռն նւիրատու՝ դոկտ. Ալբերտ Մելիք Ղասումեանը:

Դոկտ. Ղասումեանի նւիրատւութիւնը հնարաւորութիւն տւեց ՀԿՀ-ին վերանորոգել հանրակացարանի չորս յարկերը: Չորրորդ եւ հինգերորդ յարկերի վերանորոգումը աւարտւեց եւ ներկայացւեց բացման օտնակատարութեան ընթացքում: Երկրորդ եւ երրորդ յարկերը կաւարտւեն ամռանը: Հանրակացարանի վերանորոգման ծախսերը հոգալուց բացի, դոկտ. Ղասումեանը նաեւ օգնեց հայթայթելու բոլոր սենեակների կահաւորումը, նաեւ ամէն յարկում տրամադրելու երկու փորիկ խոհանոց:

Բացման օտնակատարութեան ժամանակ, Համալսարանի նախագահ եւ կրթութեան նախարարը դոկտ. Ղասումեանին շնորհեց Արցախի Պետական համալսարանի պատւոյ դոկտորայի աստիճան: Դոկտ. Ղասումեանը, որ հանրայայտ ուրախ է եւ Բոստոնի համալսարանի բժշկական դպրոցի դեկանի խորհրդական խումբի անդամ, իր պատրաստակամութիւնը յայտնեց մարդասիրական օժանդակութիւն կատարել Արցախի Պետական համալսարանի աղգայ նախագծերին:

Տեղական պարբերաթերթի հետ ասուլիսի ընթացքում, դոկտ. Ղասումեանն ասաց, որ վերանորոգման նախագիծը իր սրտին շատ մօտիկ է, որովհետեւ իր մեծ հայրն ու մեծ մայրը ծնւել են Արցախում, եւ այս փորձառութիւնը իրեն աւելի մօտեցրեց իր հայկական ժառանգութեանն ու արմատներին:

Հանրակացարանի վերանորոգման նախագիծը գործադրումը ղեկավարեց ՀԿՀ-եան վարչութեան անդամ Նշան Փիրումեանը: Այս վերանորոգութեան նախագիծը գերազանցնում է Հայ կրթական հիմնարկութեան միջոցով վերանորոգած դպրոցների ընդհանուր թիւը Հայաստանում, Արցախում եւ Ջաւախքում աւելի քան 177 դպրոցով:

ՀԿՀ-ը, ինչպէս միշտ, իր ստացած նւիրատւութիւնների 100 տոկոսը տրամադրում է այն նպատակին, որի համար հիմնական նւիրատւութիւնը կատարւել է: «Մենք անչափ շնորհակալ ենք դոկտ. Ղասումեանին իր առաջաձեռն նւիրատւութեան համար», ասաց ՀԿՀ-եան ատենադպեր Հերմինէ Փախանեանը:

Յաւելեալ տեղեկութիւնների կամ նւիրատւութեան համար խնդրում ենք դիմել ՀԿՀ-եան գրասենեակ (818) 242-4154 կամ համացանցային նամակով կապւել ***aef@aefweb.org.***

www.aefweb.org

Հողածին ու հողաբույր արվեստ՝ գողված լույսով

Արեւշատ Ավագյանի նոր ժողովածուն՝ «Հոգեգույն ծածկագրերով»

Արեւշատ Ավագյանը ճանաչված դեմք է ոչ միայն Հայաստանում: Նա ճանաչված է իր ինքնատիպ արձակով ու քնարերգությամբ, ինչպես նաեւ իր իմաստասիրական խոհերով ու առանձնահատուկ գեղանկարչությամբ: Արեւշատ Ավագյանի էության մեջ բնաբուխ շնորհներով միաձուլվել են բանաստեղծելու, գեղանկարելու, նաեւ ծաղկազարդելու, գրչագրելու կարողություններն եւ հմտությունները: Նա իր գրչով ու վրձնով հարստացրել ու զարդարել է հայ գեղարվեստական գրականությունն ու գեղանկարչությունը: Այդ մասին են վկայում նրա հրատարակած բազմաթիվ գրքերն ու ժողովածուները, գեղանկարչական կտավները: Սկսած 1950-ական թվականներից ցայսօր՝ նրա արձակ ու չափածո ստեղծագործությունները տպագրվել են մամուլի էջերում, հրատարակվել են նաեւ բազմաթիվ գրքերով: Տարբեր ժամանակներում գեղանկարչական ստեղծագործությունների անհատական մի շարք ցուցահանդեսներ են բացվել ո՛չ միայն հայրենի երկրում, այլ տարաբախտի այլեւայլ վայրերում:

Արեւշատ Ավագյանի անցած ճանապարհը հարուստ ու բովանդակալից է՝ սերունդներին պարգեւած արվեստի բազում գործերով:

Եվ այդ բոլորին ավելանում է մի նոր ժողովածու եւս՝ «Հոգեգույներ՝ ծածկագրերով» խորագրով, որ 2011-ին տպագրել է «Սոֆիկա» հրատարակչությունը: Գրախոսվող ժողովածուի մեջ մեկտեղվել են Արեւշատ Ավագյանի բանաստեղծական, իմաստասիրական եւ գեղանկարչական մի շարք նոր գործեր, որոնք տրամաբանական շարունակությունն են հեղինակի նախորդ՝ «Խոսք եւ գույն» ժողովածուի: Իսկ հիշատակված ժողովածուից առաջ, 1980-ին, տպագրվել է «Աստղիկի ծնունդը» խորագիրը կրող ալբոմ-ժողովածուն, որը նախանշել էր Արեւշատ Ավագյանի արվեստի վերընթաց ուղին՝ ստեղծված գրչի ու վրձնի միաձույլ գործունեությամբ: Այս նոր ժողովածուի մեջ առավել զորությամբ են արտացոլված հեղինակի բանաստեղծական, իմաստասիրական (փիլիսոփայական), գեղանկարչական արարումները՝ իրենց տարողունակ իմաստներով ու բովանդակությամբ: Եվ, ասես, գրքի շաղիկի նկարի (որ ինքը՝ Ա. Ավագյանն է) գաղտնագրերով ստեղծվել է շարադրանքի բնաբանը, որ ուղենշում է նրա բովանդակությունը՝ արտահայտված խոհական, իմաստասիրական խոր ընդհանրացումներով: Ահա ծածկագրերով բնաբան դարձած այդ մտքերը. «Տիեզերքն իմ ներսում է՝ իր աստղատառ արարչական ծածկագրերով: Հույսն ընդամենը վառվող մի մոմ է խավարում, բայց ամեն մի մարդ իր ներաշխարհում աստղազարդ հավատով երկինք ունի: Հոգին կենսական նյութի բարձրագույն դրսեւորումն է, որը Արարողին կապում է մարդկանց հետ: Տիեզերքը լցված է սիրով: Խիղճը Տիրոջ արդարամտության չափանիշն է մարդու մեջ: Առողջ պահենք մեր խիղճը: Մեր հավատի զորացման մասին մտածենք: Օգտվենք մեր ընդերքի (նկատի ունի մեր հոգին, մեր ներքին էությունը-Ռ. Դ.) հարստությունից»:

Այս խորհրդածությունից ելնելով՝ Ա. Ավագյանը ժողովածուի մեջ ստեղծել է մի ինքնատիպ ստեղծագործական արժեքների աշխարհ, որն ունի «Տիեզերքի հոգեւոր պատկերը», «Երազկոտ հայորդիներ», «Ջնծաղիկների առավոտը», «Գաղտնագրված սեր» բաժնեմասային վերնագրերը կրող բաժինները: Դրանք հեղինակի «հոգեգույների գաղտնարաններն» են, որոնցում ծածկագրերով, գեղանկարչական պատկերներով, արձակ եւ չափածո խոսքերով, փիլիսոփայական դատումներով արտահայտված են տարաբնույթ խոկումներ, մտքեր տիեզերքի, բնության իրերի ու երեւույթների, չարի ու բարու, սիրո ու գեղեցիկի, ստորի ու վեհի մասին եւ, որ գլխավորն է, մարդու ու նրա բնույթի մասին:

Վերլուծել ու ընկալել հեղինակի բոլոր արձակ խոսքերը, բանաստեղծությունները, ծածկագրերով արտահայտված մտքերը, գեղանկարչական պատկերները, դժվար է, եթե, մանավանդ, հաշվի առնենք տեղի սղությունը: Դրանք խոր դիտարկումով պիտի կարդալ ու խորհել, հասկանալ հեղինակի հույժ ուսուցողական մտքերը: Գրքում անչափ շատ են համանման իմաստասիրական ընդհանրացումները, որոնք զուգակցված են գեղանկարչական ուրույն պատկերներով:

Տարբեր խոհեր, տարբեր կենսական ու մարդկային հատկանիշներ, հոգեղեն մտքեր են ամփոփված չափածո ստեղծագործություններում, որոնք շատ դեպքերում չունեն դասական տաղաչափության, երանգավորման կանոնները:

Արեւշատ Ավագյանի քերթվածները, որոնք արտացոլում են մեր կյանքի ծուռն ու թերին, մարդկանց դրական ու բացասական հատկանիշները, քնարական են, խոհական եւ շատ դեպքերում հնչում են իբրեւ սաղմոսներ, աղոթքներ, պատշխարանքներ, շարականներ ու երգեր՝ հոգեղեն պարումների ու ելեւէջումների բազմերանգ դրսեւորումներով: Ա. Ավագյանի քերթվածներին հատուկ են բանաստեղծական ինքնատիպ պատկերները, պատկերավորման ու արտահայտչական ինքնատիպ միջոցները; Մի քանի օրինակ. «Երաշխարհիս երկնքում», «աստղերը փսփսում են», «լուսափայլ հղացումներ», «ժամանակը թերթում է կյանքի էջերը», «լուսաբեր ռիթմեր», «կապույտ թրթիռ», «մտքի լուսանցքներ», «չթողնենք սուտը մոլախոտվի մեր շուրջը», «երազկոտ հանգրվաններ» եւ այլն:

Ա. Ավագյանի արձակ եւ չափածո գործերը հիմնականում աչքի են ընկնում լեզվական անաղարտությամբ, գրական հայերենի օրինաչափությունների ճշգրիտ պահպանմամբ:

Շարադրանքում նշեցի, որ Ա. Ավագյանի արձակ եւ չափածո ստեղծագործությունները, որոնք վարպետորեն կերտված խտացումներ են (դրանք նույնպես առավելություններ են), զուգակցված են ծածկագրերով եւ գեղանկարչական պատկերներով: Եվ դրանք ավելի են հարստացնում ու իմաստավորում հեղինակի խոսքը, նպաստում ասելիքի բովանդակության խորացմանը: Այդ ամենից բացի, գրախոսվող ժողովածուին մի առանձին գրավչություն ու բովանդակություն են հաղորդում վերջին էջերում զետեղված գեղանկարչական 45 գունանկարները, որոնք նկարչական արվեստի կատարյալ ու առինքնող գործեր են եւ արտահայտում են տարբեր երեւույթների ու իրողությունների պատկերային խտացումներ:

Հիրավի, իմաստալից ու բովանդակային է Ա. Ավագյանի բանաստեղծական եւ գեղանկարչական աշխարհը. խորք ու ոգի ունեցող քերթվածները՝ շրջազգեստված իմաստասիրական խոհերով, հոգեղեն պարումներով, լույսերի, սերերի, արեւների, բարու ու գեղեցիկի, նաեւ հավերժի շողերով ու ազատաբաղձ հույսերի երամներով, ընդելուզվել, գրկախառնվել են գեղանկարչական կտավների բազմերանգությանն ու արարումներին եւ բազմիմաստ բառերի ու բազմազան գույների խտացումներով կերպարանավորել մի ինքնատիպ արվեստի աշխարհ, որ պատկանում է լույսով, արեւներով ու սերերով առլեցուն Արեւշատ Ավագյանին...

Եվ հողածին ու հողաբույր արվեստի այդ հրաշալի աշխարհը մտնողը կանգնում է հայեցի արմատների վրա՝ հաստատուն ու անտերեր, իրեն առարկայորեն պատկերացնում իր ոսկեղենիկ լեզվի, իր հինավուրց ու արարչական Հայրենիքի տերն ու տնօրենը:

ՌՈՄԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ
(կրճատումներով)

Վարդան Մինասյանը գոհ էր խաղից՝ միաժամանակ նշելով տեղ գտած թերությունները

Ղազախների նկատմամբ տոնած համոզիչ հաղթանակը մեծ ոգեւորություն է առաջացրել հայ ֆուտբոլասերների շրջանում: Մեր ֆուտբոլիստներն իրենց լավ դրսեւորեցին հատկապես առջեւի գծում՝ ցուցադրելով գեղեցիկ, կոմբինացիոն սուր ոճով հագեցած ֆուտբոլ: Բնականաբար իր սաների խաղից ընդհանուր առմամբ գոհ էր նաեւ ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ **Վարդան Մինասյանը**՝ միաժամանակ նշելով հատկապես պաշտպանությունում տեղ գտած թերությունները:

«Այնքան էլ գոհ չեմ մեր պաշտպանական գծի խաղից: Գնդակով խաղը լավ էր ստացվում, սակայն պաշտպանությունում կրկին ագրեսիվության պակաս կար: Դա բացատրում եմ որոշ ֆուտբոլիստների խաղային պրակտիկայի պակասով: Իհարկե, մարզումների շնորհիվ կարող է որոշակի դրական տեղաշարժ նկատվել ֆուտբոլիստների մոտ, սակայն դա բավարար չէ: Մարզումները չեն կարող փոխարինել հանդիպումներին, խաղային ռիթմի պահպանմանը: Չնայած նկատված թերություններին, շարունակում եմ վստահել այսօր հավաքականում հանդես եկող մեր պաշտպաններին: Նրանցից պահանջելու եմ անկախ իրենց թիմերի մարզիչների հետ ունեցած փոխհարաբերություններից եւ մրցակցությունից, անպայման ձգտել տեղ գրավել մեկնարկային կազմում ու խաղալ:

Հունաստանի խաղի համեմատ փոփոխություններ էինք կատարել եզրերում: Առաջին կեսում ձախից խաղում էին Արսակ Եդիգարյանն ու Լեւոն Հայրապետյանը: Վերջինիս առաջադրանք էր տրվել խաղի ընթացքում Գեւորգ Ղազարյանի հետ փոխվել եզրերով: Լեւոնն իր առաջադրանքը լավ կատարեց: Ցավոք, նա առաջին խաղակեսում վնասվածքի պատճառով լքեց խաղադաշտը: Նրա տեղին կար է դրվել:

Կային նաեւ ֆուտբոլիստներ, որ իրենց համար անսովոր դիրքերում խաղացին: Օրինակ Սարկիսովը մինչեւ Յուրա Մովսիսյանին փոխարինելը հանդես եկավ իր համար անսովոր աջ եզրում, ուստի խաղից դուրս էր մնում», նշել է Վարդան Մինասյանը:

Հավաքականի գլխավոր մարզիչն իր գոհունակությունն է հայտնել որոշ ընդմիջումից հետո կրկին դարպասը պաշտպանած Գեւորգ Կասպարովի գործողություններից: Նա նշել է, որ Կասպարովը բավականին վստահ խաղ ցուցադրեց, հատկապես՝ օդային պայքարում: Մինասյանի կարծիքով, եթե Կասպարովը շարունակի վստահ ելույթները, ապա ազգային հավաքականում այլեւս դարպասապահի խնդիր չի ծագի:

Մինասյանը նաեւ նշել է, որ իր համար այնքան էլ կարեւոր չեն մարտավարական սխեմաները, ավելի կարեւորում է, թե ինչ ֆուտբոլիստներ են ընդգրկված այդ սխեմաներում: Ուստի շատ կարեւոր է, որ հավաքականի բոլոր ֆուտբոլիստներն էլ խաղան իրենց ակումբներում ու լավ մարզավիճակով ներկայանան հավաքներին:

Գլխավոր մարզիչն անդրադարձել է նաեւ մրցակցի խաղին: Նա նշել է, որ ուսումնասիրել էր ղազախների խաղը, տեղյակ էր նրանց ուժեղ եւ թույլ կողմերի մասին: Ղազախների խաղում Մինասյանը ոչ մի նորություն չի նկատել:

Իր սկզբունքին հավատարիմ, ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչն այս անգամ էլ չի ցանկացել առանձնացնել որեւէ մեկին, նշելով, որ իր թիմում 20 ֆուտբոլիստներն էլ առաջատարներ են համարվում:

Հայ շախմատիստուհիներն անմասն մնացին խաղարկվող պարգեւներից

Բաթումում ավարտվեց կայծակնային խաղի կանանց աշխարհի առաջնությունը: Ցավոք Հայաստանի 2 ներկայացուցիչներն էլ իրենց հնարավորություններից թույլ հանդես եկան: Լիլիթ Մկրտչյանը վաստակած 7 միավորով գրավեց 34-րդ տեղը, իսկ Էլինա Դանիելյանի արդյունքը (6 միավոր) մրցաշարի 50 մասնակիցների մեջ 40-րդն էր:

Ավարտական 5 տուրերում Լիլիթը վաստակեց ընդամենը 2 միավոր, իսկ Էլինան իր օգտին միայն մեկ միավոր գրանցեց: Լիլիթը հաղթեց Իրինա Կրուշին եւ Յուե Վանին, պարտվեց Մայա Չիբուրդանիձեին, Յիֆսին Դինգին եւ Մերի Արաբիձեին: Էլինան վերջնագծում հաղթեց միայն Նատիա Ջանջավային, պարտություններ կրեց Աննա Ուշենինայից, Նատալյա Պոգոնինայից, Նինո Խուցիձեից եւ Հարիկա Դրոնավալիից:

Կայծակնային խաղի աշխարհի չեմպիոնուհու տիտղոսը նվաճեց ռուսաստանցի Վալենտինա Գունինան, որը 15 հնարավորից վաստակեց 13 միավոր: 2-րդ տեղը 10,5 միավորով զբաղեցրեց ուկրաինուհի Նատալիա Ժուկովան: Նույնպիսի ցուցանիշով 3-րդ տեղը գրավեց Սլովենիան ներկայացնող Աննա Մուզիչուկը:

Մրցանակակիրները պարգեւատրվեցին մեդալներով ու դրամական պարգեւներով, իսկ չեմպիոնուհին նաեւ ադամանդե քարերով թագ ստացավ: Վալենտինա Գունինան պարգեւատրվեց 10 հազար դոլարով, Նատալիա Ժուկովան ստացավ 7 հազար դոլար, իսկ Աննա Մուզիչուկին հանձնվեց 5 հազար դոլար: Ընդհանուր առմամբ դրամական պարգեւների արժանացան լավագույն արդյունքի հասած 15 շախմատիստուհիները:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ Բաթումում արագ շախմատի աշխարհի չեմպիոնուհի էր հռչակվել բուլղարուհի Անտուանետա Ստեֆանովան, 2-րդ եւ 3-րդ տեղերը գրավել էին ռուսաստանցի Ալեքսանդրա Կոստենյուկը եւ հնդիկ շախմատիստուհի Համպի Կոներուն: Նրանց դրամական պարգեւներն ավելի բարձր էին: Ստեֆանովան պարգեւատրվեց 12 հազար դոլարով, Կոստենյուկը՝ 9 հազար, Կոներուն՝ 7 հազար դոլարով:

5 հայ շախմատիստներ առաջատարների խմբում են

Բուլղարիայում ընթացող շախմատի մրցաշարի 2-րդ տուրում հայ շախմատիստներից 5-ը կրկին հաղթեցին: Տիգրան Պետրոսյանը հաղթեց Վալերի Լիլովին, Ավետիք Գրիգորյանը պարտության մատնեց Էրգին Մոլովին, Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն առավելության հասավ Վալենտին Փամբուկչյանի նկատմամբ: 2-րդ հաղթանակները տոնեցին նաեւ Հրայր Սիմոնյանն ու Վահե Բաղդասարյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Իվա Վիդենովային եւ Ալեքսանդր Ֆիեռին: Հայ շախմատիստների հնգյակը մի խումբ մասնակիցների հետ 2-ական միավորով գլխավորում է աղյուսակը:

Վլադիմիր Հակոբյանը 2-րդ պարտիայում էլ հաշտություն կնքեց Վլադիմիր Կոկսալի հետ: Կեսական միավոր վաստակեցին նաեւ Հովհաննես Գաբուզյանը, Հրանտ Մելքումյանը, Կարեն Գրիգորյանը: Առաջին հաղթանակները տոնեցին Նելլի Աղինյանն ու Վլադիմիր Պողոսյանը, որոնք մեկնարկում պարտվել էին:

ՇԱԽՄԱՏ

Լեւոն Արոնյանը կմասնակցի Տալի հուշամրցաշարին

Այսօր կայծակնային մրցաշարով Մոսկվայում կմեկնարկի շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Միխայիլ Տալի 7-րդ հուշամրցաշարը: 15 հազար եվրո մրցանակային հիմնադրամով կայծակնային մրցաշարում գրաված տեղերը կլինեն Տալի հուշամրցաշարի 10 մասնակիցների մեկնարկային համարները: Տալի հուշամրցաշարի առաջին տուրը կկայանա վաղը:

10 մասնակիցների թվում է Հայաստանի շախմատիստների առաջատար Լեւոն Արոնյանը (2825), որն իր վարկանիշով զիջում է միայն նորվեգացի Մագնուս Կառլսենին (2835): Մասնակիցներից 2800-ից բարձր վարկանիշ ունի նաեւ Վլադիմիր Կրամնիկը (2801): Գլխավոր մրցանակի համար կպայքարեն նաեւ Թեյմուր Ռաջաբովը (2784), Ալեքսանդր Գրիշչուկը (2761), Հիկարու Նակամուրան (2775), Ֆաբիանո Կարուանան (2770), Ալեքսանդր Մորոզեւիչը (2769), 2009-ի Եվրոպայի չեմպիոն Եվգենի Տոմաշեւսկին (2738) եւ Լյուկ Մակշեյնը (2706): Վերջինս ընտրվել է Ռուսաստանի շախմատի ֆեդերացիայի կայքում շախմատասերների միջեւ անցկացված հարցման արդյունքներով:

Լեւոն Արոնյանը շատ հաջող է հանդես եկել Տալի հուշամրցաշարում՝ 3 անգամ դառնալով հաղթող: 2006-ին նա 1-ին մրցանակը կիսել է Պետեր Լեկոյի եւ Ռուսլան Պոնոմարյովի հետ: 2010-ին Արոնյանի հետ հավասար միավորներ էին վաստակել Սերգեյ Կարյակինն ու Շահրիյար Մամեդյարովը, իսկ անցյալ տարի հայ գրոսմայստերը հաղթողի դափնին կիսել էր Մագնուս Կառլսենի հետ: Տալի հուշամրցաշարի մրցանակային հիմնադրամը 100 հազար եվրո է:

ՀՀ հավաքականը 51-րդ տեղում է

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մեկնարկի շեմին ՖԻՖԱ-ն հրապարակել է ազգային հավաքականների դասակարգման հերթական ցուցակը: Հայաստանի հավաքականը նախորդ ամսվա համեմատ 4 հորիզոնականով նահանջել է եւ զբաղեցնում է 51-րդ հորիզոնականը: Բնականաբար, ղազախների նկատմամբ տոնած հաղթանակը դասակարգման այս ցուցակի մեջ հաշվարկված չէ: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականների մեջ մեր ընտրանին շարունակում է մնալ 2-րդը ռուսներից հետո: ՌԴ հավաքականը 13-րդ տեղում է: Ռուսները 2 հորիզոնականով նահանջել են: 3-րդ ցուցանիշն ունի Ուկրաինայի ընտրանին, որը 52-րդ տեղում է: Ուկրաինացիներն էլ 2 հորիզոնականով նահանջել են: ԱՊՀ երկրների մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 57. Էստոնիա, 66. Ուզբեկստան, 69. Բելառուս, 76. Լատվիա, 88. Լիտվա, 95. Վրաստան, 112. Ադրբեջան, 129. Տաջիկստան, 138. Թուրքմենստան, 140. Մոլդովա, 141. Ղազախստան, 196. Ղրղզստան:

Դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել Իսպանիայի հավաքականը: 2-րդ տեղում հիմնավորվեց Ուրուգվայի ընտրանին, որը շրջանցեց գերմանացիներին: Իր 4-րդ տեղը պահպանել է Հոլանդիայի հավաքականը, որին հաջորդում են Բրազիլիայի, Անգլիայի, Արգենտինայի, Խորվաթիայի, Դանիայի եւ Պորտուգալիայի ընտրանիները:

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի մրցակիցներից դանիացիներից հետո ամենաբարձր վարկանիշն ունեն իտալացիները, որոնք 12-րդ տեղում են: Նրանք պահպանել են իրենց դիրքը: Չեխերը նահանջել են մեկ հորիզոնականով ու զբաղեցնում են 27-րդ տեղը:

Բուլղարացիներն առաջադիմել են 6 հորիզոնականով եւ զբաղեցնում են 90-րդ տեղը: Մալթայի ընտրանին 3 տեղով բարձրացել եւ հանգրվանել է 147-րդ հորիզոնականում:

Ուկրաինայի հավաքականի 10 ֆուտբոլիստներ թունավորվել են

Եվրո-2012-ին նախապատրաստվող հավաքականները շարունակում են փորձամրցումները: Առաջնության կազմակերպիչ երկրներից մեկի՝ Ուկրաինայի հավաքականը Գերմանիայում 0-2 հաշվով պարտվեց թուրքերին: Այդ խաղից առաջ Ուկրաինայի հավաքականի 10 ֆուտբոլիստներ թունավորվել էին ու չկարողացան մասնակցել թուրքերի հետ հանդիպմանը: Հավաքականի գլխավոր մարզիչ Օլեգ Բլոխինը չի բացառել, որ դա կարող էր նաեւ հատուկ արված լիներ:

Ի դեպ, Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Գրիգորի Սուրկիսը հայտարարել է հավաքականի ֆուտբոլիստներին նախատեսված պարգեւավճարների մասին: Եթե ուկրաինացիները նվաճեն Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, հավաքականը կստանա 4,5 մլն եվրո: Եզրափակիչ մտնելու համար պարգեւավճարը 3 մլն է, կիսաեզրափակիչինը՝ 2 մլն, խմբային մրցաշարի արգելքը հաղթահարելը՝ կրկին 2 մլն: Բացի այդ, խմբային մրցաշարում յուրաքանչյուր հաղթանակը գնահատվել է 500 հազար եվրո, ոչ-ոքին՝ 250 հազար:

Ֆրանսիայի ընտրանին 4-0 հաշվով ջախջախեց էստոնացիներին: 2 գոլ խփեց Քարիմ Բենզեման: Շվեդները 2-1 հաշվով հաղթեցին սերբերին, իսկ Ավստրիա-Ռումինիա մրցախաղում դարպասները մնացին անառիկ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն միացել է «IPv6 արձանագրության համաշխարհային մեկնարկի օր» նախաձեռնությանը

Մեծ սերնդափոխություն համացանցի պատմության մեջ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, ուրախ է տեղեկացնել, որ միանում է ինտերնետային ծառայությունների առաջատար մատակարարների, ցանցային սարքավորումներ արտադրողների եւ ցանցային ընկերությունների նախաձեռնությանը՝ հունիսի 6-ից սկսելով օգտագործել IPv6 ինտերնետ արձանագրությունը: Բոլոր վեբ եւ փոստային ծառայությունները այսուհետեւ մշտապես հասանելի կլինեն ինչպես IPv4, այնպես նաեւ, IPv6 արձանագրություններով:

IPv6 ինտերնետ արձանագրության գործարկման միջազգային նախաձեռնությունը համացանցի պատմության մեջ ամենամասշտաբային սերնդափոխությունն է: Քայլը առանցքային նշանակություն կունենա համացանցի զարգացման ոլորտում:

1981-ից գործող IPv4 ինտերնետ արձանագրությունն այլեւս չի համապատասխանում մերօրյա պահանջներին, քանի որ IPv4 արձանագրության հասցեներն արդեն սպառված են: Ինտերնետի արագ աճին զուգընթաց ի հայտ են եկել նոր՝ IPv6, ինտերնետ արձանագրության ստեղծման անհրաժեշտությունը, որն ընձեռում է ավելի շատ IP հասցեներ տրամադրելու եւ հետեւաբար՝ համացանցին ավելի շատ թվով սարքեր միացնելու հնարավորություն:

Ի տարբերություն IPv4-ի, IPv6-ի կարեւորագույն առանձնահատկություններից է հասցեների առավել ընդլայնված տարածքը: Մասնավորապես՝ IPv4 ինտերնետ արձանագրությունն օգտագործում է հասցեների 32-բիթանոց ձեւաչափ, կամ, այլ կերպ ասած՝ ապահովում է ավելի քան 4 մլրդ եզակի IP հասցե, իսկ 1995թ.-ից՝ IPv4 արձանագրությանը զուգահեռ գործող IPv6 արձանագրությունն օգտագործում է հասցեների 128-բիթանոց ձեւաչափ եւ համապատասխանաբար՝ ապահովում է 340 տրիլիոն եզակի հասցե:

IPv6-ի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված էր ավելի մեծ թվով անհատական IP հասցեներ ապահովելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ինտերնետին միացման համար օգտագործվող սարքերի՝ անհատական համակարգիչների, բջջային հեռախոսների եւ բազմապիսի այլ սարքերի օրեցօր աճող թիվը:

Բջջային հաղորդակցության շուկայում առաջատարի ղեկը ստանձնած ՎիվաՍել-ՄՏՍ-ն տվյալների փոխանակման ծավալների շարունակական աճ է արձանագրում եւ մեծ կարեւորություն է տալիս IPv6 ինտերնետ արձանագրության ներդրմանը:

IPv6-ը հասանելի կլինի ավտոմատ կերպով՝ IPv4-ին զուգահեռ: ՎիվաՍել-ՄՏՍ-ի պաշտոնական կայքէջը՝ www.vivacell.am աշխատում է թե՛ IPv4 եւ թե՛ IPv6 ինտերնետ արձանագրություններով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Ազգ» թերթի 24.05.2012 թ. թիվ 93(4945) համարի 8-րդ էջում տպագրված «ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՄԱՆ» մեջ տեղ են գտել սխալներ: Ներկայացնում ենք ճիշտ տարբերակը:

ՀՀ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 11.06.2012թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը:

Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝ «Երեւանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող ուսումնական մասնաշենքը, որի մակերեսն է՝ 1108.4 ք.մ., աղբանոց՝7.3 ք.մ., պարիսպ՝ 139.04 գծմ, հողամաս՝ 0,1750.5 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Հ. Հակոբյան փողոց, թիվ 3/16:

Լոտի մեկնարկային գինը սահմանված է 105.000.000 (հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ առկա սահմանափակումները՝ տարածքը վարձակալության պայմանագրի հիման վրա տրված է վարձակալության: Լոտի վաճառքը վարձակալության պայմանագրի դադարեցման հիմք չէ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով նախավճար, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 07.06.2012թ. ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական:

Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաեւ այն դեպքում, երբ աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկացություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 07.06.2012թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտին՝ նախապես ստանալով Կազմակերպչի թույլտվությունը:

Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:

Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Ս. թ. հունիսի 12-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում (ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա «Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման» հանձնաժողովի հերթական նիստը:

Օրակարգում՝

1. «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ի կողմից «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը խախտելու համար համապատասխան պատասխանատվության միջոցի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանքի կիրառման վերաբերյալ հարցը:

2. «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը խախտելու համար համապատասխան պատասխանատվության միջոցի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանքի կիրառման վերաբերյալ հարցը:

3. «Աուդիս Սըփորթ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ժ» կետի պահանջը խախտելու համար համապատասխան պատասխանատվության միջոցի՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով տուգանքի կիրառման վերաբերյալ հարցը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հարգելի հաճախորդներ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 23.04.2012թ.-ից 20.06.2012թ. ընկած ժամանակահատվածում անցկացվող վերանորոգման եւ ընդլայնման աշխատանքների կապակցությամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Արաբկիր մասնաճյուղի Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սպասարկումը կիրականացվի հետեւյալ մասնաճյուղերում՝

- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Թիվ 14 մասնաճյուղ- հասցե՝ ք. Երեւան, Սարգավագի փող. 123
- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Թիվ 2 մասնաճյուղ - հասցե՝ ք. Երեւան, Կոմիտասի պող. 41
- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Թիվ 10 մասնաճյուղ- հասցե՝ ք. Երեւան, Դրոյի փող. 15

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք զանգահարել բանկի միասնական տեղեկատվական կենտրոն +(374 8000) 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի ղեկավարությունը հայցում է իր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հատատված է պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 01-ի որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՃՁԲ-4

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երեւան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Պարզեցված ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Համակարգչային եւ տեսաձայնային ցանցի անցկացման, կոնֆերանս համակարգի եւ SIP հեռախոսակայանի ներդրման ծառայությունների ձեռքբերման» գնման պայմանագիր (այսուհետեւ՝ Պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու Համակարգչային եւ տեսաձայնային ցանցի անցկացման, կոնֆերանս համակարգի եւ SIP հեռախոսակայանի ներդրման ծառայությունների ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հայտարարության հիման վրա պատվիրատուին գրավոր պահանջ ներկայացրած անձն իրավունք ունի այդ պահանջը ներկայացնելու օրվա ընթացքում թղթային ձեւով ստանալ անվճար հրավեր:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագիր կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ գնահատող հանձնաժողովի գործողությունները եւ որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, ք. Երեւան, Մ.Խորենացու-7 հասցեով գնումների եւ շինարարության բաժին, մինչեւ 15.06.2012թ. ժամը՝ 12:00-ն, դրանք պետք է կազմված լինեն հայերեն: Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Պարզեցված ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներակայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման պայմանների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Կորել է

Վահագն Գրիշայի Խանաղյանի Ա N 124683 դիպլոմը, տրված ԵՊՀ-ից 1974 թ.: Համարել անվավեր:

ՀՀ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպվող բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտեին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

1. Արտադրամաս, շենքի ընդ. մակերեսն է՝ 183.4 ք.մ, շինությունների մակերեսը՝2430.4 ք.մ., հողամաս՝ 0.47 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Էջմիածին, Մարգարայի խճուղի: Լոտի մեկնարկային գինը՝ 55000000ՀՀ դրամ:

Գույքը գրավադրված է: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 1,5%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից՝ առաջին փուլի մասնակցության համար մինչեւ 21.06.2012թ. ժ. 16:00-ն, հաջորդ փուլերի համար մինչեւ նախորդող աշխատանքային օրը ժ. 14:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին երկու փուլերը դասական եղանակով՝ 25.06.2012թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր նույն ժամին հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.09.2012թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե՝ աճուրդը համարվում է չկայացած կամ այն վճարած անձը չի արձանագրվում հաղթող: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-52-28 հեռախոսահամարով:

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 6.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: